

Անուշ Յ. Սարգսյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

anoush.sargsyan@gmail.com

ORCID: 0000-0003-2066-3306

**ԲԱՔՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԵՏՔԵՐՈՎ***

Ամփոփում

Մոտ 31.000 միավոր հայերեն ձեռագրեր են պահվում Հայաստանի Հանրապետության և աշխարհի տարբեր երկրների պետական, եկեղեցական, անհատական հավաքածուներում: Սակայն մինչ օրս կան անհայտ մնացած կամ չցուցացակագրված ձեռագրական միավորներ, որոնց թվին են պատկանում Բաքվի հայերեն ձեռագրերը:

Հայերեն ձեռագրերը հավաքագրվել են Բաքվում 19-րդ դարի երկրորդ կեսից: 1940-1970-ական թթ. մի շարք հայ ուսումնասիրողներ հետազոտել են Սովետական Ադրբեջանի մայրաքաղաքի հավաքածուներում պահվող այդ ձեռագրերը: Մասնավորապես՝ 1940-ականների վերջին Վազգեն Հակոբյանը ուսումնասիրել է Բաքվի Լենինի անվան կենտրոնական գրադարանում և Նիզամիի անվան պետական պատմական թանգարանում պահվող հայերեն ձեռագրերը: Նրանից հետո Լևոն Խաչիկյանը, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդում և Բաքվի Լենինի անվան կենտրոնական գրադարանում իրականացրած իր հետազոտության արդյունքները ամփոփել է մի

* Մտքերի փոխանակման համար շնորհակալ ենք **Միքայել Առաքելյանին**, որի հետ հրատարակության ենք պատրաստում Բաքվի հայերեն ձեռագրերի ցուցակը: Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի մանրամասն պատմությունն ծանոթանալու համար երախտապարտ ենք **Վլադիմեր Կեկելիային**: Ընդունվել է տպագրության 26.05.2025:

տետրակում, որն այժմ պահվում է Մատենադարանում՝ նրա անունը կրող արխիվային ֆոնդում:

Հայ հետազոտողների հայտնաբերած ձեռագրական տվյալները լրացվում են Մատենադարանում և Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում պահվող ձեռագրերի մանրածապավեններով, արխիվային նյութերով ու դրանց վերաբերյալ հիշտակատություններով: Նշած աղբյուրների ու դրանց վերաբերող գրականության մեջ Խորհրդային Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի պետական հաստատություններում արձանագրված են 12 հայերեն և երկու վրացերեն ձեռագրեր և հայերեն ձեռագրի մի արժաթյա կազմ: Ադրբեջանական հավաքածուին մաս կազմող ձեռագրերի հիշատակարանային տվյալների, դրանց պահվելու վայրերի ու անցած ճանապարհի մասին տեղեկությունների համադրությունը հնարավորություն է տալիս համապարփակ պատկերացում կազմելու Բաքվում պահվող հայերեն ձեռագրերի պատմության վերաբերյալ:

Բանալի բառեր–Լևոն Խաչիկյան, Մատենադարան, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդ, Բաքվի Վ. Ի. Լենինի անվան կենտրոնական գրադարան, Բաքվի Մարդասիրական ընկերության գրադարան, Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոն, Ադրբեջանական ԳԱ Մ. Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտ:

Anush Yu. Sargsyan

TRACING ARMENIAN MANUSCRIPTS PRESERVED IN BAKU

Abstract

About 31,000 Armenian manuscripts are preserved in state, church, and private collections in the Republic of Armenia and various countries around the world. However, some manuscripts remain uncatalogued or unknown, including those preserved in Baku.

During the period from the 1940s to the 1970s, several Armenian scholars conducted research on Armenian manuscripts housed in collections in Baku, the capital of the Azerbaijan SSR. In the late 1940s, Vazgen Hakobyan studied manuscripts held at the Central City Library, named after Lenin, and the Nizami State Museum of History. Later, Levon Khachikyan examined Armenian

manuscripts in the Republican Manuscript Depository of the Academy of Sciences of the Azerbaijan SSR and the Central City Library named after V.I. Lenin. His research resulted in a handwritten catalogue of these manuscripts, which is now preserved in an archival collection bearing his name at the Matenadaran.

The findings of these scholars are supplemented by manuscript microfilms kept at Matenadaran and the Korneli Kekelidze Georgian National Centre of Manuscripts, as well as archival materials and scholarly records. These sources and related literature collectively document twelve Armenian manuscripts, two Georgian manuscripts, and a silver plaque from another Armenian manuscript that was previously housed in the capital of the Azerbaijan SSR. The colophon data on these manuscripts, their provenances, and their movements—considering the formation of manuscript collections in Azerbaijan—provide a more comprehensive understanding of their trajectory.

Key words—Levon Khachikyan, Matenadaran, Republican Manuscript Fund of Azerbaijan SSR, Central City Library named after V.I. Lenin in Baku, Library of Armenian Philanthropic Society, Korneli Kekelidze Georgian National Centre of Manuscripts, Institute of Manuscripts named after M. Fizuli of ANAS.

Ануш Ю. Саргсян

ПО СЛЕДАМ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ, ХРАНЯЩИХСЯ В БАКУ

Резюме

Около 31 000 армянских рукописей хранится в государственных, церковных и частных коллекциях в Республике Армения и различных странах мира. Однако некоторые рукописи остаются не каталогизированными или неизвестными, включая те, которые хранятся в Баку. Армянские рукописи начали собирать в Баку со второй половины XIX в.

В период с 1940-х по 1970-е годы, несколько армянских ученых проводили исследования армянских рукописей, хранящихся в коллекциях Баку, столицы Азербайджанской ССР. В конце 1940-х гг. Вазген Акопян исследовал рукописи, находившиеся в Центральной городской библиотеке им. В.И. Ленина и в Государственном историческом музее им. Низами. Позднее Левон Хачикян изучил армянские рукописи в Республиканском рукописном фонде Академии наук Азербайджанской ССР и в Центральной городской библио-

теке им. В.И. Ленина в Баку. Результатом его исследования стало создание рукописного каталога этих рукописей, который ныне хранится в архивной коллекции Матенадарана, названной в его честь.

Результаты работы этих ученых дополнены микрофильмами рукописей, хранящимися в Матенадаране и в Грузинском национальном центре рукописей им. Корнели Кекелидзе, а также архивными материалами и научными записями. Этими материалами и соответствующей литературой задокументировано двенадцать армянских рукописей, две грузинские рукописи и серебряная табличка от армянской рукописи, которая ранее находилась в столице Азербайджанской ССР. Данные в колофонах этих рукописей, их происхождение и передвижение - с учетом формирования коллекций рукописей в Азербайджане – дают более полное представление об их месте нахождения.

Ключевые слова – Левон Хачикян, Матенадаран, Республиканский рукописный фонд Академии наук Азербайджанской ССР, Центральная библиотека им. В.И. Ленина в Баку, Библиотека Бакинского общественного собрания, Грузинский национальный центр рукописей им. Корнели Кекелидзе, Институт рукописей им. М. Физули НАНА.

Մուտք

1957 թ. նոյեմբերի 29-ին՝ Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստում կարդացած՝ «Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին» թեմայով զեկույցում ակադեմիկոս **Լևոն Խաչիկյանը** անդրադարձել է Բաքվում պահվող հայերեն ձեռագրերին. «.....մենք պետք է ավելի լավ իմանանք հայերեն ձեռագրերի այլ հավաքածուների բովանդակությունը և անհրաժեշտության դեպքում կարողանանք ստանալ կարևոր բնագրերի **լուսանկար պատճենները**: Այս ուղղությամբ որոշ աշխատանք մեզ մոտ կատարված է: Այժմ մենք ունենք Վրաց թանգարանի ձեռագրական բաժնի 240 ձեռագրերի մանրամասն ցուցակը.... **ունենք նաև տվյալներ Բաքվում, Մոսկվայում, Լենինգրադում պահվող հայերեն ձեռագրերի մասին և այլն**» (Խաչիկյան, 1958, 7-23)¹:

¹ Ըստ Մատենադարանի գրանցամատյանի՝ ներկայումս Մատենադարանի «Դրսի մանրաժապավենների ֆոնդ»-ում պահվում է 1324 միավոր, որոնց մեծ մասը ձեռք է բերվել Լևոն Խաչիկյանի պաշտոնավարման շրջանում:

Դեռևս 1955 թ. հրապարակած «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» աշխատության առաջին հատորի առաջաբանում Խաչիկյանը նշում էր, որ **անձամբ ուսումնասիրել է** Լենինգրադի, Մոսկվայի, Թբիլիսիի և **Բաքվի հայկական ձեռագրական հավաքածուներն և հիշատակարաններ քաղել** (Խաչիկյան, 1955, LVI): Մատենադարանի՝ ակադեմիկոս **Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդում** պահվում են այդ ուսումնասիրությունների մեծ մասի **ինքնագրերը: Անտիպ ձեռագրացուցակների** արժեք ունեցող այդ թղթապանակ-տետրակները վերնագրված ու համարակալված են Խաչիկյանի ձեռքով (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 313, 299, 300 և 211)²: Աշխատանքային տարբերակներին բնորոշ եղանակով դրանք պարունակում են կրճատումներ, համառոտագրություններ, ջնջումներ, հավելումների ձևով ուղղումներ, մտապահելու նպատակով արված ընդգծումներ ու մեկնաբանություններ և նույնիսկ ծաղրանկարներ:

1. Լևոն Խաչիկյանի «Բաքվի հայերեն ձեռագրերը» տետրակը

Լևոն Խաչիկյանի ինքնագիր «Ե» համարի «**Բաքվի հայերեն ձեռագրերը**» վերնագրով տետրակը նրա անունը կրող արխիվային ֆոնդի **211 վավերագրն է**³: Դրանում **Ադրբեջանի ձեռագրական ֆոնդի** պատմությանը հաջորդում է նրան պատկանող **հայերեն ձեռագրերի նկարագրությունը**: Տետրակը թվական չունի, այսինքն՝

²«Ա» համարի թղթապանակ-տետրակում նկարագրված են Լենինգրադի Մ.Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի հայերեն ձեռագրերը (ներկայումս՝ Ռուսաստանի ազգային գրադարան), «Բ» տետրակում՝ ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լենինգրադի արևելագիտության ինստիտուտի արևելյան ձեռագրերի բաժնի հայերեն ձեռագրերը (ներկայումս՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արևելյան ձեռագրերի ինստիտուտ), «Գ» տետրակում՝ Մոսկվայի Լենինյան գրադարանի ձեռագրական բաժնի հայերեն ձեռագրերը (ներկայումս՝ Ռուսաստանի պետական գրադարան) և «Ե» տետրակում՝ Բաքվի «Նիզամիի անվան ձեռագրատան» հայերեն ձեռագրերը (նախկին՝ Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդ):

³Ըստ Մատենադարանի Արխիվի և արխիվագիտության բաժնի ցուցակի նկարագրության՝ 211 վավերագիրը բովանդակում է «**Բաքվի ձեռագրատան ստեղծման պատմություն, կենտրոնական գրադարանում եղած հայկական ձեռագրերի (Մաշտոց, Գիրք արեգական և լուսնի, Մեկնութիւն արարածոց, Փիլիսոփայական բառարան, Համայիլ, Ավետարան և այլն) նկարագրություններ և արտագրված հատվածներ**»:

հայտնի չէ Խաչիկյանի Բաքու գործուղվելու ժամանակը: Այնուամենայնիվ, վերոնշյալ հիշատակարանների հատորի հրատարակության թվականից և Խաչիկյանի աշխատանքային գործունեության վերաբերյալ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից ելնելով՝ **գործուղումը** պետք է որ կայացած լինի **1951–1954 թթ.** միջակայքում⁴:

Վավերագիր 211-ը կազմված է իրար չամրացված 35 թերթից: Այն շարադրված է երկու լեզվով. առջևի և հետևի կազմերի վրայի գրառումներն ու աղբրեջանական ձեռագրական հավաքածուի պատմության հատվածը գրված են հայերեն ու ռուսերեն, իսկ հայերեն ձեռագրերի նկարագրության հատվածը՝ հայերեն: Ամենայն հավանականությամբ՝ Խաչիկյանը Բաքվում պահվող ձեռագրերի պատմության մասին կարդացել կամ բերանացի լսել է ռուսերեն և ըստ այդմ՝ շարադրել է նույն լեզվով:

Վավերագիր 211-ի կազմին՝ առջևից ու հետնամասում գրառումներ են արված Աղբրեջանի կուլտուրայի մինիստրի և Ամենայն հայոց կաթողիկոսի անուններով: Կազմի Ա երեսին կարդում ենք 1955–1956 թթ. պաշտոնավարած Աղբրեջանական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Մամեդ Համիդ օղլի Ալեքսանդրովին հասցեագրված ռուսերեն գրությունը. **«Министру культуры Аз.ССР тов.Алекперову»**: Դրանից ներքև շարունակված է՝ նշել նպատակը [указать цель], որի տակ հայերենով մակագրված է՝ **«Բաքվի հայերեն ձեռագրերը»**: Կազմի Բ երեսի սև թանաքով ջնջած գրությունը ընթերցում ենք հետևյալ կերպ. «Ամենայն հայոց վեհափառ հայրապետ **Վազգեն Ա.**–ին՝ խորին ակնածանքով և խորին երախտագիտությամբ»:

⁴ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների Ա հատորը հանձնվել է արտագրության 1954 թ. հունվարի 16-ին, ստորագրվել է տպագրության 1955 թ. մայիսի 4-ին (Խաչիկյան, 1955, 819): Մատենադարանի 1949–1955 թթ. հրամանների գրքերը, որոնք պահվում են Մատենադարանում՝ **«Մատենադարան հիմնարկի արխիվային ֆոնդ»**–ի թղթ. 82-ում, վավ. 41 և 42-ում, տեղեկություններ չեն պարունակում Լևոն Խաչիկյանի՝ Բաքու գործուղվելու վերաբերյալ: Նույն ֆոնդի, թղթ. 82-ի, վավ. 41-ում տեղ գտած 1951 թ. հուլիսի 1-ի 27-րդ հրամանից տեղեկանում ենք, որ պատմական գիտությունների թեկնածու Լևոն Խաչիկյանը ազատվել է Մատենադարանի ձեռագրատան վարիչի պաշտոնից Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում լրիվ դրույքով աշխատանքի անցնելու պատճառով: Խաչիկյանը Մատենադարանում կրկին աշխատանքի է անցել որպես դիրեկտոր 1954 թ. հունիսի 18-ին (ՄՄ, «Մատենադարան հիմնարկի արխիվային ֆոնդ», թղթ. 82, վավ. 42, 1954 թ., հրաման 25): Այսինքն՝ **նա գործուղվել է Բաքու Պատմության ինստիտուտում աշխատելու տարիներին**:

Այս ամփոփ ձևակերպումներից կարելի է հետևություն անել, որ Խաչիկյանը մտադիր է եղել դիմել Խորհրդային Ադրբեջանի կուլտուրայի մինիստրի և հավանաբար նաև՝ Ամենայն հայոց կաթողիկոսի միջնորդությանը՝ Բաքվի հայերեն ձեռագրերի լուսապատճենները կամ ձեռագրերը ստանալու նպատակով:

Ինչպես հայտնի է, **Խորհրդային Միությունում գրավոր ժառանգության հազվագյուտ ձեռագրերը կենտրոնացվել են հանրապետությունների համապատասխան պետական հաստատություններում. Խորհրդային Հայաստանի ձեռագրերը՝ Հայաստանի Մինիստրների Սովետին կից պետական ձեռագրատուն-Մատենադարանում՝ 1959 թ. մարտի 3-ից նույն ֆոնդի վրա հիմնված Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-«Մատենադարանում»:** Ըստ այդմ՝ տեղական ու միութենական տարբեր երկրների պետական ու եկեղեցական հաստատություններից, ինչպես նաև առանձին անհատներից **հավաքագրման, փոխանակման, նվիրատվության ու գնման ճանապարհներով համալրվել է Մատենադարանի ձեռագրական ֆոնդը**⁵: Տարբեր տարիներին Հայաստանից դուրս գտնվող Խորհրդային Միության պետական հաստատություններից, ինչպես, օրինակ, Աստրախանի պետական արխիվից, Վրաստանի կենտրոնական պատմական արխիվից, Ադրբեջանի ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գրադարանից և Էրմիտաժից Մատենադարանին են փոխանցվել մի շարք ձեռագրեր (Եգանյան և ուրիշներ, 1965, 171, 173, 175, 181, նաև՝ Եգանյան և ուրիշներ, 1970, 1539, 1540, Coulie, 2020, 54, 329, 292–293):

Վերոնշված վարկածի համապատասխան՝ օրինակ՝ Էրմիտաժից տեղափոխված ձեռագրերը Մատենադարանին են տրվել ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստրության որոշմամբ (07.04.1958 թ. հ.250) (Եգանյան և ուրիշներ, 1965, 181) Իսկ, օրինակ, Վազգեն Ա-ին (աթոռակալել է 1955–1994 թթ.) հղած նամակներից մեկում Մատենադարանի տնօրենության անունից Խաչիկյանը շնորհակալություն էր հայտնում Նոր Զուղայից ձեռագրի մանրաժապավեն ստանալու հարցում միջնորդության համար⁶:

⁵ Այսպես, օրինակ՝ 27.07.1940 թ. Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի N 31-րդ որոշումով Հայաստանի տարածքի բոլոր ձեռագրերը պարտադիր կերպով պետք է հանձնվեին Մատենադարանին (Եգանյան և ուրիշներ, 1965, 137):

⁶ «Ձեր միջնորդության շնորհիվ Պետական Մատենադարանը ստացավ Հայկական կանոնագրքի և Կոստանդ Զուղայեցու աշխատությունների լուսանկարները Նոր Զու-

Վավերագիր 211-ի կազմի երեսին հիշատակված վերոնշված պաշտոնյաների աշխատանքային գործունեության տվյալների համադրությունը թույլ է տալիս նաև ճշգրտելու այդ գրառումների մոտավոր ժամանակը, որն է 1955/1956 թ-ն: Այսինքն՝ կազմի գրությունները Խաչիկյանն արել է հետագայում:

2. Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդի պատմությունը

Լևոն Խաչիկյանի՝ «Բաքվի հայերեն ձեռագրերը»-ի տետրակը սկսվում է **Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդի (այսուհետ՝ ԱՌՁՖ, (1950–1986 թթ.)** պատմությանը վերաբերող հակիրճ գրառումներով⁷: Տվյալներ են բերվում ադրբեջանական ձեռագրական հավաքածուի կազմավորման պատմության, ձեռագրերի ու փաստաթղթերի հավաքման ու դրանց աճի, միջնադարյան նշանավոր հեղինակների արժեքավոր ձեռագրերի ու գրողների արխիվների, հնագույն ձեռագրական միավորների, օտարալեզու հավաքածուների և ֆոնդի դրվածքի, աշխատողների քանակի և ձեռագրական ֆոնդերի գույքամատյանի մասին (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211):

Հայերեն ձեռագրերի ուսումնասիրության տեսանկյունից մասնավորապես կարևորում ենք ադրբեջանական ձեռագրական հավաքածուի ստեղծման մասին Խաչիկյանի հաղորդած տեղեկությունները: **Ըստ Խաչիկյանի տետրակի՝ ադրբեջանական ձեռագրական ֆոնդը կազմավորվել է 1920-ականներին Պետական թանգարանում** (նկատի ունի Պետական պատմական թանգարանը), որը 1934 թ. ունեցել է

դայի պատվարժան կրոնական խորհրդից: Ձեր ցուցաբերած հոգատարության համար Մատենադարանի դիրեկցիան Ձեզ հայտնում է իր խորին շնորհակալությունը: Պետական Մատենադարանի դիրեկտոր՝ Լ. Խաչիկյան» (ՄՄ, «Մատենադարանի արխիվային ֆոնդ», թղթ. 84/11, վավ. 14):

⁷ Մեկնաբանելով Լևոն Խաչիկյանի՝ ադրբեջանական ձեռագրական հավաքածուի պատմության վերաբերյալ հետևյալ գրառումը. «...1949 թ. տրվում է Նիզամիի թանգարանի շենքին, հարկը (14 սենյակ), որը 250,000 ռ[ուբլի] ռեմոնտ՝ պահարաններ, սելյիֆեր և այժմ պահվում են լավ պայմաններում: 1950 թ. տեղափոխվում են այստեղ: Ունեն ընթերցասրահ:» (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211)՝ գտնում ենք, որ նա նկատի ունի 1950 թ. Ադրբեջանական Գիտությունների ակադեմիայի Նիզամիի անվան գրականության և լեզվի ինստիտուտում կազմավորված Ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդը: Այս նույն ֆոնդը 15-րդ դարի հիշատակարանների հատորում անվանում է «Նիզամիի անվան ձեռագրատուն»:

100–150 ձեռագիր: 1936–1937 թթ. թանգարանի ձեռագրական ֆոնդը տրվել է **Նիզամիի անվան գրականության և լեզվի ինստիտուտին**: Մինչև ԽՍՀՄ-ի Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ մտնելը՝ հավաքագրվել են ձեռագրեր, հին տպագիրներ ու գրողների արխիվներ: Պատերազմից հետո ձեռագրերի հավաքման գործընթացը ավելի կազմակերպված բնույթ է ստացել. «հայտարարություններ են տրվել թերթերում և ձեռագրերը են հավաքվել շրջաններից» (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211): Այս տեղեկությունը համադրելով մեր ուսումնասիրության հետ՝ նկատում ենք, որ այսօրինակ ճանապարհով **Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղի բնակչուհի Բեզլարանց Մամուշը** ընտանեկան սրբության՝ հրաշագործ **«Գյուլիստանի Ծեր ավետարան»**-ի (ՄՄ 11308) արծաթյա մեծադիր կազմը (ձեռ. ծավալ՝ 31.5×9.4 սմ) **1947 թ. հանձնել է Բաքվից եկած պաշտոնյաներին** (Կարապետյան, 2019, 60–61, հմմտ. Ղահրամանյան, 2002, 96–97):

1949 թ. ադրբեջանական հավաքածուի ձեռագրերը տրվել են Նիզամիի թանգարանի շենքին, իսկ **1950 թ. Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Նիզամիի անվան գրականության և լեզվի ինստիտուտում հիմնադրվել է ԱՌՁՖ-ն**, որտեղ կենտրոնացվել են ձեռագրերը: **1950 թ. Մինիստրների սովետի որոշմամբ «պարտադրվում է բոլոր գիտական և գրադարանային հիմնարկներին՝ բոլոր ձեռագրերը հանձնել Ձեռագրատուն (Նախիջեվան, Շամախի, Կիրովաբադ).** այս ճանապարհով հավաքվում է մոտ 3000 ձեռագիր» (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211):

Խաչիկյանի այցի ժամանակ ԱՌՁՖ-ն ունեցել է 14.000 ձեռագիր: Վերջիններս դասավորված են եղել ըստ չափերի՝ փոքրից մեծ (վավերագիր 211-ում՝ A–E): **Գույքամատյանի համաձայն՝ ԱՌՁՖ-ն ունեցել է վեց ձեռագրական ֆոնդ, որոնցում տեղաբաշխված են եղել պարսկական, արաբական, ադրբեջանական, ուզբեկական, թուրքմենական, հայկական, վրացական, ռուսական ձեռագրերը:** Հավանական է, որ ամենափոքր՝ վեցերորդ ֆոնդի մեջ մեկտեղված են եղել հայերեն, վրացերեն ու ռուսերեն ձեռագրերը:

Հետագայում ադրբեջանական ձեռագրական հավաքածուի պատմությունը շարունակել է մնալ Խաչիկյանի և մատենադարանցիների ուշադրության կենտրոնում: Այդ մասին է վկայում մասնավորապես **ԱՌՁՖ-ի տնօրեն Մամեդաղա Սուլթանովի՝** Խաչիկյանին հասցեագրած նամակները, որոնցից **«Республиканский рукописный фонд»** [Ռեսպուբլի-

կական ձեռագրական ֆոնդ] վերնագրով տեղեկանքը ստորագրված է 14.06.1972 թ. ամսաթվով (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 785)⁸: Այստեղ այլ մանրամասներ են ներկայացված ձեռագրական հավաքածուի պատմության մեզ հետաքրքրող մասի վերաբերյալ: Ըստ այդմ՝ ԱՌԶՖ-ն ձևավորվել է Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումից հետո: Սկզբում ձեռագրերը գտնվել են Պատմության պետական թանգարանում, այնուհետև Ադրբեջանի՝ Ուսումնասիրման և հետազոտման ընկերությունում (հիմնադրվել է 1923 թ.), ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ադրբեջանական մասնաճյուղի գրադարանում [АзФАН СССР] և ապա՝ Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Նիզամիի անվան գրականության ու լեզվի ինստիտուտում: **1950 թ. Ադրբեջանի Մինիստրների սովետը Նիզամիի անվան գրականության և լեզվի ինստիտուտում պահվող ձեռագրական ֆոնդին տվել է առանձին գիտական հաստատության կարգավիճակ: Ֆոնդում պահվող ադրբեջաներեն, ուզբեկերեն, տաջկերեն, թուրքմեներեն, պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, հայերեն, վրացերեն լեզուներով ձեռագրերը հավաքվել են Սովետական Ադրբեջանի տարածքից** (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 785):

ԱՌԶՖ-ի պատմությանը և դրանում հայերեն ձեռագրեր պահվելու մասին տեղեկությանը համառոտ ակնարկի ձևով անդրադարձել է նաև Մատենադարանի միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ, արևելագետ **Հակոբ Փափագյանը** Ադրբեջանական ԱՌԶՖ-ի 1963 թ. հրատարակած առաջին ձեռագրացուցակին նվիրված գրախոսականում (Փափագյան, 1965, 306–310):

ԱՌԶՖ-ի կազմավորման պատմության մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել նաև տարբեր հրապարակումներում, ինչպես նաև այդ ֆոնդի հիման վրա 1986 թ. բացված Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի Մամեդ Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտի կայքէջում

(<https://www.manuscript.az/en/index.php?do=static&page=history-մուտք>⁹ 01.04.2024): Այնուամենայնիվ, դրանցում, ինչպես նաև ձեռագրացուցակ-

⁸ Ուսումնասիրության մեջ ներառված չէ Մատենադարանի արխիվում պահվող Մամադաղա Սուլթանովի՝ Լևոն Խաչիկյանին հասցեագրած մյուս նամակը արխիվային միավորի վատ վիճակում գտնվելու պատճառով (ՄՄ, «Մատենադարան հիմնարկի արխիվային ֆոնդ», թղթ. 84/82, վավ. 22):

ներում ներառված չեն ձեռագրական ավելի փոքր ֆոնդի պատկանող հայերեն, վրացերեն ու ռուսերեն ձեռագրական միավորները: Հրապարակված ձեռագրացուցակներում հայտնաբերել ենք միայն Բաքվի ձեռագրերի ինստիտուտի կողմից ցուցակագրված հայերեն մի տպագիր **Աղոթագիրք** ու հիշատակարանների ժողովածու 597 (216-A) (Gahramanov, 1993, 21): Ելնելով ցուցակի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ տպագրի մի մասը ձեռագիր է, այնուամենայնիվ, ներկայացված հակիրճ տվյալները բավարար չեն տեսակետ հայտնելու համար:

3. Բաքվի հայերեն ձեռագրերն ըստ Լևոն Խաչիկյանի տետրակի

Խաչիկյանի «Բաքվի հայերեն ձեռագրերը» տետրակում Ադրբեյջանի ձեռագրական հավաքածուի պատմությանը հետևում են Բաքվում պահվող հայերեն **9 ձեռագրերի նկարագրությունները**, որոնք համարակալված, թերթակալված ու վերնագրված են հետևյալ կերպ.

1.«**№ 1՝ Մաշտոց**», թ. 6-7 (ըստ Լևոն Խաչիկյանի թերթակալման՝ էջ 1-2ա. այսուհետ՝ Լ.Խ.).

ծնթ. ժամանակ՝ 1676, տեղ՝ **Ադրակ, Էրզնկան գիւղ**, գրիչ՝ **Դավիթ քահ.**, պատվիրատու՝ **Յակոբ քահ.**,⁹

2.«**№ 2՝ Գիրք արեգական և լուսնի**» (թ. 8-17 (Լ. Խ.՝ էջ 3-12)).

ծնթ. ժամանակ՝ 1801, տեղ՝ **Ճալերի վանք**, գրիչ՝ **Աբրահամ վարդ.**

3.«**Մեկնութիւն արարածոց**» (թ.18 (Լ. Խ. էջ՝13)).

ծնթ. ժամանակ՝ 1813, տեղ՝ **Բաքու**, գրիչ՝ **Յովսէփ Տէր-Առաքելեան, Տէր-Յովսէփեանց**,

4. «**№ 4՝ [Բառարան փիլիսոփայական]**» (թ. 21(Լ. Խ.՝ էջ 3-3ա)).

ծնթ. ժամանակ՝ **ԺԷ/ԺԸ դար**, գրիչ՝ **Ստեփանոս**,

5. «**№ 6՝ Հմայիլ Աղթարք**» (թ. 22 (Լ. Խ.՝ էջ 4-4ա)).

ծնթ. ժամանակ՝ **ԺԸ դար**,

6. «**№ 5՝ Համայիլ**» (թ. 23-25 (Լ. Խ.՝ էջ 5-7ա)).

⁹ Նույն գրիչ Դավիթ քահանան 1676 թ. Էրկան գյուղում Ձեռաց Մաշտոց է ընդօրինակել Միրո տանուտիրոջ համար, որը պահվում է Մատենադարանում 6008 թվահամարի ներքո: Այդպիսով, Բաքվի հավաքածուի Մաշտոցը գրեթե նույնական պետք է լինի Մատենադարանի հավաքածու ձեռագրի հետ (Եգանյան և ուրիշներ, 1970, 231):

ծնթ. ժամանակ՝ 1701, տեղ՝ **Մանկասար գիւղ**, գրիչ՝ **Զաքարիա երեց**, ստացող՝ **պարոն Մխիթար**,

7. «№ 2՝ **[Բանք չափու Ներսիսի] Շնորհալոյ**» (թ. 26–28 (Լ. Խ.՝ էջ 8–10ա)).

ծնթ. ժամանակ՝ 1642, գրիչ՝ **Ոսկան**, ստացող՝ **Յոհան**,

8. «№ 3՝ **Ժողովածու**» (թ. 30, 29, 19–20 (Լ. Խ.՝ էջ 12–12ա, 11, 1–2)¹⁰.

ծնթ. ժամանակ՝ 1579^o, **ԺԶ–ԺԷ դարեր**, գրիչ՝ **Յոհանէս**,

9. «**Աւետարան**» (թ. 31–33 (Լ. Խ.՝ էջ 1–3)).

ծնթ. ժամանակ՝ 1667, տեղ՝ **Կաֆա, Ս. Սարգիս Զորավոր եկեղեցի, Ղրիմ (Սուրխաթ)**, գրիչ և ծաղկող՝ **Նիկողայոս Մելանավոր**, ստացող՝ **մահտեսի Ճանդուլի (1668 թ.)** (ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211):

Ինչպես նկատում ենք, ձեռագրերը համարակալված են խառը դասավորությամբ, իսկ դրանցից երկուսը առհասարակ համար չունեն և երկուսի թվահամարը կրկնվում է: Բացի այդ՝ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի առաջաբանում առկա Խաչիկյանի վկայությունն այն մասին, որ ինքն անձամբ ուսումնասիրել է «**Բաքվի Նիզամիի անվան Ձեռագրատան 10 ձեռագրերը**» (իմա՝ **ԱՌՁՖ-Ա. Մ.**) և դրանցից մեկի հիշատակագրությունն ընդգրկել հատորում, հակասություն մեջ է Խաչիկյանի անտիպ տետրակում տեղ գտած ձեռագրերի թվաքանակի հետ (Խաչիկյան, 1955, LVI հմմտ. ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211): Մյուս անհամաձայնությունն այն է, որ Խաչիկյանի տետրակում նկարագրված առաջին ձեռագիրը՝ «N 1՝ Մաշտոց»-ը ցուցակագրված է Ֆիզուլի 46 հասցեում՝ **Բաքվի Վ. Ի. Լենինի անվան կենտրոնական գրադարանի հայկական բաժնում** (1920–1991 թթ.)¹¹: Իսկ հիշատակարանների հատորում տեղ գտած և Խաչիկյանի տետրակից բացակայող ձեռագիրը նույնպես ներկայացված է որպես Բաքվի Վ. Ի. Լենինի անվան կենտրոնական գրադարանի հայկական բաժնի № 1 ձեռագիր (Խաչիկյան, 1955, 94): Այս ձեռագրի վավերագիր 211-ից դուրս մնալը կարելի է բացատրել նրանով, որ հավանաբար Խաչիկյանն այն տետրակից առանձնացրել է հատորի հրատարակության ժամանակ և չի վերադարձրել իր տեղը:

¹⁰ Էջերի դասավորության մասին տե՛ս ստորև:

¹¹ 20-րդ դարի 50-ականներին Լենինի անվան կենտրոնական գրադարանը գտնվել է Ֆիզուլիի 46 հասցեում: Ֆիզուլիի անունը կրող փողոցը 1962 թ. վերանվանվել է Նիզամի Գյանջինկի անունով:

Հավելենք, որ Խաչիկյանը հիշատակարանների հատորում ընդգրկած Լենինի անվան կենտրոնական գրադարանի ձեռագրին անդրադառնում է 1409 թ. հիշատակարանների շարքում՝ մասնավորապես Մեծփավանքում գրված ՄՄ 921 ձեռագրում հիշատակվող Մկրտչի վերաբերյալ տրված ծանոթագրության մեջ: Նա հավանական է համարում, որ Մկրտչի (Մկրտիչ վարդապետ Նահապետենց) գրչին է պատկանում Բաքվի ձեռագրի միջին մասի՝ Գրիգոր Տաթևացու **Քարոզգրքի** գրչությունը (Խաչիկյան, 1955, 94, 743): Այնուհետև մեջբերելով քարոզներից մեկի վերջում տեղ գտած Տաթևացու՝ Մեծփավանքից Տաթև հեռանալու փորձի մասին վկայող անթվակիր հիշատակագրությունը, այն թվագրում է 1409 թ. (Խաչիկյան, 1955, 94):

Տաթևացու **Քարոզգրքին** և դրա հիշատակագրությանն անդրադարձել է նաև Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պատմաբան **Արտաշես Մաթևոսյանը**՝ Մեծփավանքի գրչության կենտրոնին նվիրված իր ուսումնասիրության մեջ¹²: Մաթևոսյանը, թարմացնելով ձեռագրի վայրի մասին տվյալները, նշում է, որ այն պահվում է **Բաքվի «Պատմ. թանգ.»**-ում (Պատմության թանգարանում) (Մաթևոսյան, 1997, 60, 88–89, 192) :

Վերոնշյալ իրարամերժ տեղեկությունները հստակեցնելու և վավերագիր 211-ի բովանդակությունը լրացնելու համար առանցքային նշանակություն ունեն ֆոտոարխիվները՝ մասնավորապես Մատենադարանի և Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի՝ սովետական շրջանում հավաքագրած մանրաժապավենների ֆոնդերում պահվող Բաքվի հավաքածուների հայերեն ու վրացերեն ձեռագրերի լուսապատճենները:

4. Բաքվի հավաքածուների հայերեն և վրացերեն ձեռագրերի մանրաժապավենները

Մատենադարանի **«Դրսի մանրաժապավենների»** ֆոնդի 51 թվահամարի տակ պահվում է **Olim ԱՌՁԳ-ի N 8315 ձեռագրի** լուսա-

¹² 1970 թ. պաշտպանած «Մեծփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)» թեմայով ատենախոսությունը Մաթևոսյանը նույնությամբ հրապարակել է 1997 թ.: Գրքում հղելով Խաչիկյանին՝ հստակեցնում է, որ 1409 թ. Մեծփավանքում գրված Քարոզգրքի մի մասի գրիչը Մկրտիչ Նահապետենցն է (հայտնի է նաև Մածուփեցի մականունով) (Մաթևոսյան, 1997, 60, 88–89, 192):

պատճենը¹³, որը Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդի վավերագիր 211-ում տեղ գտած, համարանիշ չունեցող **Ավետարանն** է: Ձեռագրի այս թվահամարը գտնում ենք Մատենադարանի մուտքային քարտարանում, գրանցամատյանում, ինչպես նաև ձեռագրի լուսապատճենի վերջին էջերից մեկում տեղ գտած գրադարանի անընթեռնելի կնիքի վրա: Ավետարանը էջակալած է, այնուամենայնիվ, Խաչիկյանը ձեռագրի էջերը հիշատակելիս առաջնորդվել է ձեռագրերին հատուկ թերթակալմամբ: Մուտքային գրանցամատյանում ու ձեռագրի քարտարանում նշված չէ, թե այն երբ և ում կողմից է մուտք Մատենադարանի հավաքածու: Սա բացատրվում է նրանով, որ մինչև 1969 թ. (մինչև 435 միավորը) նմանատիպ տեղեկություններ չեն գրանցվել գրանցամատյանում:

«Դրսի մանրաժապավենների» **ֆոնդի 662 թվահամարի տակ պահվում է Olim ԱՌՁՖ-ի N 5030 ձեռագիրը**: Մուտքային քարտարանում 5030 թվահամարի կողքին փակագծում նշված է՝ «N 3»: Այս համարանիշը տարակարծությունների տեղիք կտար, եթե չհամապատասխաներ Խաչիկյանի տետրակում նկարագրված «N 3 **Ժողովածու**»-ի բովանդակությանը: Ձեռագրի մանրաժապավենի վերջին կիսապատառոված էջի վրա գտնում ենք նաև շրջանակի մեջ առնված «N 3» գրությամբ համարանիշը, որի կողքին մակագրված են Խաչիկյանի անուն ազգանվան սկզբնատառերը:

Ձեռագրի վրացերեն մագաղաթյա պատառիկ-պահպանակի «ա» երեսի կենտրոնում ռուսերենով գրված է «Армянский рукопись» (Հայերեն ձեռագիր): Դրա կողքին դաջած անընթեռնելի գրադարանային կնիքի վրա նշված է ԱՌՁՖ-ի համարանիշը (5030): Էջի վերևի աջ անկյունում կոտորակի ձևով նշված են նաև «Ил. 2031/1237» համարանիշները, որը հավանաբար նախկին հավաքածուի թվահամարն է:

Ձեռագիրը համարակալած է երկու անգամ. մի դեպքում թերթակալված է, մյուս դեպքում էջակալված՝ վերջից առաջ սկզբունքով: Վերջինս կարելի է բացատրել նրանով, որ էջակալվել է արաբատառ գրություններին հատուկ եղանակով: Ամենայն հավանականությամբ, թերթակալումը արվել է գրչության ժամանակ, իսկ էջակալումը՝ ադր-

¹³ Ձեռագրի մեջ դրված ու լուսապատճենած ռուսերեն գրությամբ թերթիկի վրա նշված է վերջինիս գտնվելու վայրն ու լուսանկարչի անունը. «Республиканский рукописный фонд Академии наук Азербайджанской ССР, г. Баку. Фотограф Райхель В. З.» (Ադրբեյջանական ՍՍՌ-ի Ազ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդ, քաղաք Բաքու: Լուսանկարիչ՝ Ռայխել Վ. Ջ):

բեջանական հավաքածու մուտք գործելուց հետո: Ձեռագրի լուսապատճենի համեմատությունից պարզվում է, որ վավերագիր 211-ում խառնված է թերթերի դասավորությունը, քանի որ դրանցից նշված Ժողովածուի նկարագրությանն են վերաբերում 29 (Լ. Խ.՝ էջ 11) և 19 և 20 (Լ. Խ.՝ էջ 1-2) թերթերը, որոնք պետք է դրվեն 30-րդ թերթից հետո (Լ. Խ.՝ էջ 12-12ա): Այս շփոթմունքը թույլ է տալիս ենթադրելու, որ Խաչիկյանը թերթակալումը, կամ դրա որոշ հատվածներ հետո է արել:

Մանրաժապավենի մուտքային քարտարանում ու գրանցամատյանում նշված է, որ այն հավաքածուում ներառվել է Լևոն Խաչիկյանի միջոցով՝ 1973 թ. հունիսի 5-ին: Վերջինիս ստացման հանգամանքների վերաբերյալ որոշ տեղեկություններ են հայտնի: «Բանբեր Մատենադարանի» պարբերականի 11-րդ համարի Տեղեկատու բաժնում կարդում ենք. «1971-1973 թթ. մի շարք գիտական աշխատակիցներ գիտահետազոտական նպատակներով մեկնել են գործուղման Ֆրանսիա.... Թբիլիսի, Բաքու.... » (Անթարյան, 1973, 427): Այդպիսով, հավանական է, որ Խաչիկյանը Բաքու գործուղվածների շարքում է եղել:

Այս **Ժողովածուում** տեղ գտած **Անանիա Շիրակացուն** վերագրվող «**Յաղագս միաւոր գնդին, Արատոսէ**» փոքրիկ գրվածքն ուսումնասիրել ու հրատարակել է բյուզանդագետ, ակադեմիկոս **Հրաչ Բարթիկյանը**: Նրա ուսումնասիրության համաձայն՝ նշված երկի հեղինակն է հույն նշանավոր գիտնական և բանաստեղծ **Արատոս Սուլացին** (Ք. Ա. 315-240 թթ.): Բարթիկյանը նշում է, որ բնագիրը պահպանվել է երկու ձեռագրով, որոնցից հրատարակության համար հիմք ծառայած **Բաքվի ձեռագիրն** այսպես է հիշատակում. «...**հայտնաբերել է Լևոն Խաչիկյանը Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ձեռագրական ֆոնդի N 5030 (3)**, որը, ինչպես և Վենետիկի ընդօրինակություն լուսանկարները նա սիրով տրամադրել է մեզ հրատարակության: Մեր հաճելի պարտքն ենք համարում հայտնել նրան խորին շնորհակալություն:» (Բարթիկյան, 1977, 137-162):

Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի արխիվում պահվում են Ադրբեջանից ստացված չորս ձեռագրերի մանրաժապավեններ, որոնցից երկուսը վրացերեն են, երկուսը՝ հայերեն: Մանրաժապավենները չեն նկարագրվել ու չեն հետազոտվել մինչև **Վլադիմեր Կեկելիայի** ուսումնասիրությունը: Այս մանրաժապավենների մասին Կեկելիան «**Արտասահմանում պահվող չհետազոտված երկու վրացերեն ձեռագրեր**» վերնագրով զեկույց է կարդացել Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի կազմակերպած 2019 թ. ամառային

դպրոց–գիտաժողովում (Kekelia, 2019, 15)¹⁴: Մեկնաբանելով Կեկելիայի՝ «չհետազոտված վրացերեն ձեռագրեր» խորագիրը՝ նշենք, որ 2018 թ. վերջինիս համահեղինակությամբ հրապարակվել է Վրաստանից դուրս գտնվող վրացերեն ձեռագրերի ու պատառիկների ցուցակը (շուրջ 1532 միավոր), որից դուրս են մնացել Բաքվում պահվող վրացերեն ձեռագրերը, ինչպես նաև **Olim ԱՌՁՖ-ի 5030-ի** վրացերեն մագաղաթյա պահպանակը (Chkhikvadze et al., 2018):

2019 թ. գիտաժողովի ամփոփագրից տեղեկանում ենք, որ Կեկելիան վրացերեն ձեռագրերի պահվելու վայրերը տեղորոշել է՝ ելնելով հայերեն ձեռագրերի պարունակած գրադարանային կնիքերից (Նախկին Լենինի անվան քաղաքային գրադարանի և Ադրբեջանական ՍՍՌ Ակադեմիայի գրադարանի կնիքներ): Վրացերեն ձեռագրերը 18–19-րդ դարի կաթոլիկ աղոթագրքեր են, որոնցից երկրորդի՝ N 5106 ձեռագրի (**Olim ԱՌՁՖ 5016**) 55 մանրանկարների շարքում կա նաև Ներսես Շնորհալու պատկերը: Կեկելիայի կարծիքով՝ կամ վրաց կաթոլիկները այդ ձեռագրի աղոթքները թարգմանել են հայերենից, կամ էլ դրանք նախատեսված են եղել վրացախոս հայ կաթոլիկների համար: Հետազոտելով մանրաժապավենը՝ նկատում ենք, որ վրացերեն միավորներից երկրորդը՝ նկարազարդ **Olim ԱՌՁՖ 5016** Աղոթագիրքը, գրադարանային կնիք և դարականիշներ ունի: Այս ձեռագրի վրա դրոշմված է այն գրադարանային կնիքը, որը պարունակում է նաև ԱՌՁՖ 5030 հայերեն ձեռագիրը՝ Խաչիկյանի տետրակի « N 3 ժողովածու»–ուն: Այն պարունակում է նաև հայերեն ձեռագրում առկա կոտորակի ձևով համարանիշը, որն է «ՄԽ. 1424/883»: Այդպիսով, կարելի է հետևություն անել, որ վրացերեն այս ձեռագիրը նույնպես պատկանել է ԱՌՁՖ–ին և այնտեղ մտնելուց առաջ պահվել է նույն տեղում, ինչ նույն ֆոնդի թ. 5030 հայերեն ձեռագիրը:

Վրացերեն ձեռագրերի առաջին էջերին ռուսերեն լեզվով գրություններ են թողնված, որոնցում հակիրճ նկարագրված է դրանց բովանդակությունը և մակագրված է 1987 թ.: Հավանական է, որ վրացե-

¹⁴Վլադիմեր Կեկելիան Բաքվի հավաքածուում պահվող վրացերեն ձեռագրերին անդրադարձել է նաև 2024 թ. հուլիսի 26-ին Մատենադարանում կայացած «Ընթերցողներն ու գրքային առաջնահերթությունները Վաղ արդի շրջանում»/ “Armenian Literary Horizons: The Readers and Textual Treasures in the Early Modern Period” միջազգային աշխատաժողովում «Վաղ տպագիր գրքերից մինչև ձեռագրեր. վրացական կաթոլիկ ժառանգության բազմամշակութային հայեցակետերը» վերնագրով կարդացած զեկույցում:

րեն ձեռագրերի մանրաժապավենները փոխանցվել են Վրաստանի ազգային ձեռագրերի կենտրոնին հենց այդ թվականին: Հարկ է ընդգծել նաև, որ վրացերեն այս մանրաժապավենները լրացնում են Լևոն Խաչիկյանի ու Մամեդաղա Սուլտանովի այն հաղորդումները, որ **ԱՌՁՖ-ում վրացերեն ձեռագրեր են պահվել:**

Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնում պահվող հայերեն ձեռագրերի մանրաժապավեններից մեկը, ըստ նախնական հետազոտության, **Թովմա Գեմբացու Յաղագս համահետեմանն Քրիստոսի** գործն է: Այն 1967 թ. ադրբեջանական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտից Մատենադարանին փոխանցած հայերեն երեք ձեռագրերից մեկն է: Մյուս մանրաժապավենը ժողովածու է. վերջին՝ 253 թվային էջի պատկերից երևում է, որ տվյալ մանրաժապավենում ներառված է ամբողջ ձեռագրի առաջին կեսը: Ձեռագրի այս հատվածը սկսվում է 12-րդ դարի կիլիկյան նշանավոր հեղինակ ու մեկնիչ **Սարգիս Հնորհալու Մեկնութիւն կաթողիկէ թղթոց գործով** և ավարտվում 17-րդ դարի ժամանակագիր, Բաղեշի Խնդրակատար Ս. Աստվածածին վանքի վանահայր **Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությամբ:**

Մանր հիշատակագրությունների համաձայն՝ ձեռագիրը գրչա-գրվել է **Բաղեշում Միքայել Քուչանք** անունով գրչի կողմից **1664-1667 թթ.:** Ստացող վարդապետի անունը ջնջված է, այնուամենայնիվ, ձեռագրի սկզբում տեղ գտած «Քրիստոսի ծառայ Պետրոս արքեպիսկոպոս, 128 [...]» գրությամբ կնիքադրոշմը թույլ է տալիս կարծել, որ այն 19-րդ դարում պատկանել է **Պետրոս** անունով արքեպիսկոպոսին (թվականը դժվար ընթեռնելի է և թեական): Ձեռագրի մեջ գտնում ենք Բաքվի նախկին Լենինի անվան կենտրոնական գրադարանի գրադարանային կնիքը «Бакинская Центральная библиотека имени В.И. Ленина», իսկ առաջին էջին մակագրված է ռուսերեն գրությամբ համարանիշը, որն է «Арм. N 1»:

Այս ձեռագրի բովանդակության մաս կազմող Դավիթ Բաղիշեցու *Ժամանակագրությունը* հրատարակել է **Վազգեն Հակոբյանը «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դարեր»** ժողովածուի երկրորդ հատորում (Հակոբյան, 1956, 287-378):

«Մանր ժամանակագրություններ»-ի առաջաբանում, անդրադառնալով իր օգտագործած աղբյուրներին, Վ. Հակոբյանը նշում է. «Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը քաղել ենք Բաքվի Վ. Ի. Լենինի անվան քաղաքային գրադարանում պահվող 1665 թ. ըն-

դօրինակված ձեռագրից, որն անծանոթ է հայագիտությանը» (Հակոբյան, 1956, VII) : Ըստ Հակոբյանի նկարագրության՝ Բաքվի ձեռագիրը մեկնությունների և զանազան նյութերի ժողովածու է՝ բաղկացած 589 էջից:

Հակոբյանը Բաղիշեցու ժամանակագրության հրատարակության համար հիմք օրինակ է վերցրել Բաքվի ձեռագիրը: Այդպիսով, շրջանառության մեջ է դրել մի նոր ու ավելի կատարյալ բնագիր, որը նրա կարծիքով՝ կարող է արտագրված լինել ինքնագրից:

Վազգեն Հակոբյանը ծանոթագրությամբ տեղեկացնում է նաև, որ **«Այստեղ կար (իմա՝ Լենինի անվան կենտրոնական գրադարանում-Ա. Ս.) հայերեն չորս ձեռագիր, չմշակված ու չհամարակալած: Վերջերս այս ձեռագրերը հանձնվել են Բաքվի Նիզամիի անվան պետական պատմական թանգարանին: Այստեղ պահվող հայերեն ձեռագրերում ևս մեզ հետաքրքրող նյութեր չգտնվեցին:»** (Հակոբյան, 1956, 289) : Հակոբյանի այս հաղորդումը, ինչպես նաև Մատենադարանում պահվող երկու մանրածապավենների դարականիշները ցույց են տալիս, որ հայերեն ձեռագրերը համարակալված ու մշակված չեն եղել Խաչիկյանի այցի ժամանակ, և որ վավերագիր 211-ում հիշատակվող համարանիշները Խաչիկյանի կողմից տրված պայմանական համարանիշներ են: Այսինքն՝ դրանք սկսել են մշակվել, համարակալվել ԱՌՁՖ մտնելուց հետո:

Հակոբյանի հայտնած տեղեկություններից կարելի է նաև հետևություն անել, որ նա Բաքու է գործուղվել Խաչիկյանից առաջ՝ 1940-ականներին և ձեռագրեր է ուսումնասիրել Լենինի անվան գրադարանում և Նիզամիի անվան պետական պատմական թանգարանում¹⁵:

5. Բաքվի՝ Լենինի անվան գրադարանը և այնտեղ պահվող հայերեն ձեռագիր և տպագիր գրքերը

Նախկին Լենինի անվան Բաքվի կենտրոնական գրադարանը, որն այժմ Նիզամի 53 հասցեում գտնվող **Պրեզիդենտական գրադարանի** մաս է կազմում, հիմնվել է 1870 թ. **Բաքվի Հայոց մարդասիրա-**

¹⁵ Ա.Գալստյանը «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դարեր» երկհատորյակի վերաբերյալ գրախոսության մեջ նշում է, որ Հակոբյանը ժամանակագրությունների երկհատորյակը կազմելիս ուսումնասիրություններ է արել Բաքվի, Թբիլիսիի և Էջմիածնի կենտրոնական գրադարաններում (Գալստյան, 1958, 276-280):

կան ընկերության կողմից («Մարդասիրական ընկերություն յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հայոց», 1864–1921 թթ.):

Բաքվի Մարդասիրական ընկերության գրադարանին կից բացվել է նաև ընթերցարան, և այդ երկուսը միասին, քաղաքական իրավիճակներով պայմանավորված, ընդհատումներով գործել են մինչև Մարդասիրական ընկերության փակվելը 1921 թ. սկզբին (Միրզոյան, 77–84): 1920 թ. Հայաստանի կառավարությունը փորձել է տեղափոխել Բաքվի Մարդասիրական ընկերության գրադարանը, որը մերժվել է Ադրբեջանի վարչապետ Ուսուքբեկովի կողմից (Վարդանյան, 2001, 132–135): Սովետական շրջանում գրադարանում գործել է հայկական բաժինը, որը 1933–1946 թթ. ղեկավարել է բանաստեղծ և թարգմանիչ Աշոտ Գրաշին (Խաչատրյան, 1975, 148–149) :

1917 թ. հունվարի մեկի տվյալներով Մարդասիրական ընկերության գրադարանում հաշվառված է եղել **23.526 միավոր գիրք**, որոնցից 17081–ը՝ ռուսերեն, 5863–ը՝ հայերեն, 582–ը՝ այլ օտար լեզուներով, և 6553 պարբերական մամուլ, որոնցից 5448–ը ռուսերեն, 952–ը՝ հայերեն և 153–ը՝ այլ օտար լեզուներով (Տեղեկագիր եւ հաշիւ, 1917, 4–6):

Գրադարանի հիմնադրումից երկու տարի անց այնտեղ գտնվել են ձեռագրեր, հին և նոր տպագրված գրքեր ու օրագրություններ, ռուսերեն ու եվրոպական լեզուներով գրքեր՝ մոտ 1000 միավոր (Միրզաբեյգնանց, 1872): 1891 թվականից սկսած հրապարակվել են գրադարանի հայերեն գրքերի ու ձեռագրերի գրացուցակները, որոնք պարբերաբար լրացվել են մինչև 1912 թ, իսկ այլալեզու գրքերի առաջին ցուցակը լույս է տեսել 1909 թ. և լրացվել է 1913 թ. (Գրացուցակ, 1891, Գրացուցակ, 1894, Գրացուցակ, 1899, Գրացուցակ, 1900, Գրացուցակ, 1901, Գրացուցակ, 1912, Каталог, 1909, Первое добавление къ каталогу библиотеки Бакинского Общественного Собрания за 1910–1913 гг., 1913): Գրացուցակներում թեմատիկ կատալոգներով ներկայացված են գրադարանի հայերեն գրքերը՝ ըստ դարականիշների համարների: Այս ցուցակներում ներկայացված որոշ գրքերի անունների կողքին նշված է, որ դրանք ձեռագրեր են: Այդ միավորներից շատերի վերնագրերը, թվականն ու տեղը թույլ են տալիս կարծելու, որ դրանք հնաստիպերի հետ համադրած կամ դրանցից արտագրված ձեռագրեր են: Այդ շարքում են **«Տէր-Յովսէփ, Տէր-Յովսէփեան, Մեկնութիւն Արարածոց. այսինքն Ծննդոց. ձեռագիր, 1831 թ., թ. (78) 930»** (նույնը ըստ 1912 թ. գրացուցակի՝ **«Մեկնութիւն արարածոց Տեառն ծննդոց. ձեռագիր, թ. 2309»**) (Գրացուցակ, 1891, 16, հմտ.Գրացուցակ, 1912, 75), **«Սարգիս Իմաստասեր, Գիրք Մեկ-**

նութեան եօթն թղթոցն կաթուղիկէից, ձեռագիր, Կ, Պոլիս, 1193 թ., թ. (71) 800» (Գրացուցակ, 1891, էջ 15), «Գէնովափէի պատմութիւն Դքսուհոյն Բրիտանիոյ. ձեռագիր, Բագու. 1863 թ., թ. (74) 928» (Գրացուցակ, 1891, 59), «Տօնացոյց (տոմար). ձեռագիր, թ. 8» (Գրացուցակ, 1912, 182), «Պոպովեան Սերովբէ քահ., Գիրք հասարակախօսութեան (ձեռագիր). Բագու, 1866 թ., թ. 328 (925)» (նոյնը ըստ 1912 թ. ցուցակի՝ «Պոպովեան Ս. քահ. Գիրք հասարակախօսութեան (ձեռագիր). Բագու. 1866 թ., թ. 328») (Գրացուցակ, 1891, 83, հմմտ. Գրացուցակ, 1912, 44) և «Արցախեցի Յովս. վարդ. Գիրք տեսական փիլիսոփայութեան և համաբնաբանութեան (ձեռագիր), թ. 128 (931)» (Գրացուցակ, 1891, 7)¹⁶:

Այսպիսով, Խաչիկյանը, ինչպես նաև Հակոբյանը ձեռագրեր են ուսումնասիրել նախկին Մարդասիրական ընկերության գրադարանում: Այս քննությունից կարելի է նաև եզրակացնել, որ Խաչիկյանի տետրակում նկարագրված «**N 1՝ Մաշտոց**»-ն ու «**Մեկնութիւն արարածոց**»-ը, ինչպես նաև 15-րդ դարի հիշատակարանների հատորում նշված **Քարոզգիրքը** պատկանել են Լենինի անվան կենտրոնական գրադարանին: Հավանական է, որ այս նույն գրադարանին է պատկանել վերոնշված երկուսի միջակայքում N 2-ի տակ ներկայացված «**Գիրք արեգական և լուսնի**»-ը կամ «**[Բանք չափու Ներսիսի] Շնորհալոյ**»-ը:

Իսկ Հակոբյանի հիշատակած **Ժողովածուն**, ամենայն հավանականությամբ, Մարդասիրական ընկերության 1891 թ. գրացուցակում տեղ գտած **Սարգիս Շնորհալու Գիրք Մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից** անունով հիշատակված ձեռագիրն է, որով սկսվում է նշված Ժողովածուի բովանդակությունը:

Վերոնշված տեսակետը հաստատվում է նաև Վազգեն Հակոբյանի այն տեղեկությամբ, որ Միքայել Քուչանքի գրչագրած Ժողովածուից գատ՝ գրադարանում պահվել են ևս չորս հայերեն գրչագրեր: Հավանական է, որ այդ ձեռագրերը Լևոն Խաչիկյանի այցի ժամանակ հաշվառված են եղել ԱՌՁՖ-ում: Այս տեսակետի օգտին են վկայում նաև Հակոբյանի և Մաթևոսյանի տեղեկությունները, որ դրանք տեղափոխվել են Նիզամիի անվան պետական պատմական թանգարան, իսկ այդտեղից էլ՝ ըստ ադրբեջանական ձեռագրական հավաքածուի կազմավորման պատմության, ԱՌՁՖ և ապա՝ Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտի հավաքածու:

¹⁶ Հովսեփ Արցախեցու և նրա ձեռագրական ժառանգության մասին (Նազարյան, 1994, 397–407, Melkonyan, 2024, 511–524):

6. Ձեռագրերի անցած ճանապարհը

Բաքվի պետական հաստատությունների վերոնշյալ ձեռագրերից որոշների անցած ճանապարհը և նրանց հավաքածու մուտք գործելու պատմությունը հնարավոր է ձգգրտել ձեռագրերի հիշատակարանային տվյալների, դրանց վերաբերող հավելյալ գրականության ուսումնասիրությամբ՝ աղբյուրաբանական ձեռագրական հավաքածուի կազմավորման պատմության հետ համադրաբար:

Գրեթե ամբողջությամբ քարտեզագրվում է Խաչիկյանի ցուցակագրած **Օլիմ ԱՌՁՖ 8315 Ավետարանի** անցած ճանապարհը՝ գրչագրումից մինչև ԱՌՁՖ մուտք գործելը:

Ըստ հիշատակարանային տվյալների՝ Ավետարանը գրչագրվել է **Կաֆայի** (ներկայումս՝ Թեոդոսիա) **Սուրբ Սարգիս եկեղեցում և Սուրխաթում** (ներկայումս՝ Ստարի Կրիմ) 1667 թ. **Նիկողայոս Մելանավորի** ձեռքով (հայտնի է նաև Ծաղկարար մականունով): Կաֆայում բռնկված համաճարակով պայմանավորված՝ Նիկողայոս տեղափոխվել է Սուրխաթ, ուր ապաստան է գտել և սուրխաթեցի Լուսապարոնի ու նրա որդու Դավիթի աջակցությամբ ավարտին է հասցրել ձեռագրի գրչագրումը (Օլիմ ԱՌՁՖ 8315, 278բ–280բ):

Ձեռագրի ստացող, ըստ երևույթին, նախիջևանցի մահտեսի Ճանդուլին, 1668 թ. իր և ընտանիքի անունից Ավետարանը հիշատակ է թողել **Նախիջևանի Երնջակ գավառի Շահկերտ** (ներկայումս՝ Ղազանչի) գյուղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուն (Օլիմ ԱՌՁՖ 8315, 278բ–280բ)¹⁷: 1753 թ. **Ջրաբերդի Մելիք-Իսրայելի որդի Մելիք-Ադամը** Ավետարանը փրկագնել է մուսուլմաններից և ոսկեջուր սրբապատկերներով արծաթապատել է տվել կազմը (Օլիմ ԱՌՁՖ 8315, 278բ–280բ)¹⁷: Այնուհետև հիշատակ է թողել **Ջրաբերդի Եղիշե առաքյալի վանքին** (Ջրվշտիկի վանք): Ձեռագրի՝ ձեռքից ձեռք անցնելու պատմությունը, ամենայն հավանականությամբ, առնչվում է 1750 թ. Նախիջևանի Հեյդար-Ղուլի խանի **Շահկերտ** արշավանքի ու շահկերտցիների դիմադրության հետ (Միքայել Չամչեանց, 1786, 842–848): Այս իրադարձությունները կապակցվում են Նադիր շահի սպանությունից հետո գահակալական կոիվների ու կենտրոնական իշխանության թուլացման և դրա արդյունքում Նախիջևանի խանության կողմից Իրանի գերակա

¹⁷ Ջրաբերդ գավառի Մելիք-Իսրայելյան տոհմի մասին տե՛ս Մաղալյան, 2007, 103–111, հմմտ. Բաֆֆի, 1987, 425–426:

իշխանության չձանաչման, հարկապահանջության մեծացման ու խանության ներսում իշխանության զավթման շուրջ տեղի ունեցած հակամարտությունների հետ (Միքայել Չամչեանց, 1786, 842–848) :

Հիշատակարանային տվյալներին լրացնում են ձեռագրի մասին հիշատակումները: Ձեռագրի նկարագրությունն առաջին անգամ տեղ է գտել բանահավաք ու եկեղեցական նշանավոր գործիչ **Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի** (1832–1906 թթ.)՝ 1895 թ. լույս տեսած «**Արցախ**» ուղեգրական աշխատության մեջ (Բարխուդարեանց, 1895, 259–262): Կոթողային այս գրքի նյութերը Բարխուդարյանցը հավաքագրել է 1882 թ. սկսած՝ Արցախում դասավադելու և Արցախում ու Շամախիում եկեղեցական տարբեր պաշտոններ զբաղեցնելու տարիներին (Կարապետյան, 1983, 22–24): Ավետարանը Բարխուդարյանցը տեսել ու նկարագրել է **Գետաշենի Ավագ Սուրբ Նշան մատուռում** երեք այլ ձեռագրերի հետ: Գրեթե այդ նույն ժամանակահատվածում այն հատուկ ուշադրության է արժանացել պատմավիպասան **Բաֆֆու** կողմից, երբ վերջինս 1881 թ. այցելել է Գետաշեն: Այս ուղևորության տպավորությունները «**Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում**» վերնագրով լույս են տեսել 1896 թ. «Լուսն» հանդեսում (Բաֆֆի, 1896, 60–109, 193–228)¹⁸: Գետաշենում պահված չորս գրչագրերի մասին հիշատակել է նաև **Երվանդ Լալայանը** «**Գանձակ գաւառ**» աշխատության մեջ, որը տպագրվել է 1899 թ. «Ազգագրական հանդէս»-ում (Լալայան, 1899, 319, նաև՝ Եգանյան, 1971, 54–55) :

Հայտնի են նաև Գետաշենում պահված ձեռագրերի մասին վկայող 1839 և 1869 թ. արխիվային վավերագրերը, որոնք հրապարակել է **Սամվել Կարապետյանը** «**Հյուսիսային Արցախ**» գրքում: 1869 թ. վավերագրում Ավագ Սուրբ Նշան մատուռում պահվող ձեռագրերը հիշատակվում են միայն ժողովրդական ճանաչելի անուններով՝ «Կարմիր կամ Սուլթանի ավետարան», «Սպիտակ Աւետարան» և «**Կենսաբեր անվամբ Աւետարան**» (Կարապետյան, 2004, 344): Իսկ Նիկողայոս Մելանավորի գրչագրած ձեռագրի հետագայի հիշատակարանում, որը գրվել է 1753 թ. Արցախի Զրվշտիկի վանքի Ավագ վարդապետի ձեռքով, այն կոչվում է Սուրբ Կենսաբեր և Փրկագործ անունով. «...**սուրբ կլենյսաբեր և փրկագործ Աւետարանս...**»: Սրանից կարելի է ենթադրել, որ սա Ավետարանի անվանումն է, և Գետաշենի Ավագ Սուրբ

¹⁸Ամենայն հավանականությամբ՝ Բաֆֆին «Ժամանայի մեղիքությունները» գրքում Մեղիք-Իսրայելյանների տոհմածառը կազմելիս օգտվել է այս ձեռագրի հիշատակարանից:

Նշան մատուռում գտնվելու մասին վաղագույն հիշատակությունը: Հավանական է, որ Ավետարանը այնտեղ է տեղափոխվել 19-րդ դարի սկզբին հայ ազգաբնակչության Զրաբերդ գավառից Գետաշեն գաղթի ժամանակ (Կարապետյան, 2004, 326–327):

Ավետարանի հաջորդ հանգրվանի՝ Բաքվում գտնվելու վերաբերյալ առաջին տպագիր տեղեկությունը Մատենադարանի գիտախատող **Աստղիկ Գևորգյանի**՝ 1970 թ. լույս տեսած ռուսերեն լեզվով հոդվածն է (Геворкян, 1970, 89–96) : Գևորգյանն առաջին անգամ ուսումնասիրության է արժանացրել **Ավետարանի** մանրանկարչությունը՝ ցույց տալով, որ այն նշանավոր **«Ուր մանրանկարիչների ավետարան»**-ի (ՄՄ 7651)՝ Նիկողայոս Մելանավորի կատարած երեք ընդօրինակություններից մեկն է: Ըստ Գևորգյանի հաղորդման՝ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրադարանում պահվող ձեռագրի մանրանկարներին ծանոթացել է Մատենադարանի 51 թվահամարի մանրաժապավենից: Գևորգյանը ձեռագրի գրչության թվականը 1667-ի փոխարեն շփոթմամբ նշել է 1672. **«Одна из двух других копий, хранящаяся в библиотеке АН Азербайджанской ССР, относится к 1672 г.»** (Геворкян, 1970, 95): Ձեռագրի պահվելու վայրի ավելի ամբողջական տվյալները լրացրել է Մատենադարանի մատենապահ **Օնիկ Եգանյանը** (պաշտոնավարել է 1958–1973 թթ.) Գետաշենում պահված ձեռագրերի վերաբերյալ 1971 թվականի հրապարակումով (Եգանյան, 1971, 54–55)¹⁹: Մանրամասնելով Գևորգյանի՝ մանրաժապավենից քաղած տվյալները՝ նա նշում է, որ Բարխուդարյանցի հիշատակած **Գետաշենի «Ն Ա. ձեռագիրը»** գտնվում է **Բաքվում՝ Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ԱՌՁՖ-ում՝ 8315 թվահամարի ներքո** (Եգանյան, 1971, 54–55): Եգանյանը, անդրադառնալով Գետաշենում պահված մյուս երեք ձեռագրերին, հայտնում է, որ Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումից հետո դրանք մուտք են գործել Մատենադարանի հավաքածու 1920-ականների վերջին՝ **Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի** ձեռքով (Եգանյան և ուրիշներ, 1965, հմմտ. 125–128, 132, Եգանյան, 1971, 54–55, հմմտ. Hakobyan et al., 2022, 130–131) :

Հետագայում **Օլիմ ԱՌՁՖ 8315** Ավետարանին անդրադարձել են **Էմմա Կորիսմազյանն ու Հայդե և Հելմուտ Բուշհաուզեն** ամուսինները: 1978 թ. լույս տեսած Դրիմի մանրանկարչությանը նվիրված ուսումնա-

¹⁹ Մյուս ձեռագրերից «Հաղբատի Ավետարան»-ի կամ «Գիտաշենի Ավետարան»-ի մասին տե՛ս Յովսէփեանց, 1934, 110–114, նաև՝ Եգանյան և ուրիշներ, 1965, 125 – 128, 132:

նասիրության մեջ Նիկողայոս Մելանավորի գործերը ներկայացնելիս **Կորխմազյանը** հղում է Աստղիկ Գևորգյանի հոդվածը և առանց մանրամասնելու նշում, որ Նիկողայոսն «Ութ մանրանկարիչների Ավետարան»-ն ընդօրինակել է երեք անգամ (Korchmasjan, 1978, 77–79): Իսկ Ղրիմի մանրանկարչությանն ու ճարտարապետությանը նվիրված ալբոմ–ուսումնասիրության մեջ, որը հրատարակվել է 2009 թ. Հայդե և Հելմուտ Բուշհաուզենների և Էմմա Կորխմազյանի համահեղինակությամբ, ներկայացված են Ավետարանի պահվելու վայրի տվյալները: Այս գրքի մատենագիտական տախտակներում նշված է, որ Նիկողայոս Մելանավորի՝ «1167/1672 թթ.» գրչագրված Ավետարանը գտնվում է Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի կենտրոնական գիտական գրադարանում [**Baku, Centralnaja nauknaja Biblioteka AN Azerbeïzan]** **8315 թվահամարի ներքո** (Buschhausen, Korchmasjan 2009, 101.): Գրքում տեղ են գտել նաև Ավետարանի խորանապատկերներից երկուսի և արծաթապատ կազմի Ա երեսի սև ու սպիտակ արտատպությունները (Buschhausen, Korchmasjan 2009, 211 (Tefel 197; 246, Tafel 286): Հարկ է նշել, որ Մատենադարանում պահվող Ավետարանի մանրաժապավենում (թիվ 51) բացակայում են կազմի երկու երեսի լուսանկարները: Այդպիսով, չենք բացառում, որ Բուշհաուզեն ամուսինները դրանք ստացել են Բաքվից: Այնուամենայնիվ, գրքում ձեռագրի գրեթե բոլոր տվյալները նույնությամբ քաղված ու տառադարձված են գերմաներեն՝ Գևորգյանի ռուսերեն հոդվածից:

Ավետարանի մասին վերջին հիշատակությունը տեղ է գտել Մատենադարանի գիտաշխատող **Թամարա Մինասյանի**՝ Արցախի ու Ուտիքի գրչության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Մինասյանը 2022 թ. լույս տեսած **'Manuscript Heritage of Artsakh and Utik'** գրքում, հղելով Եգանյանի հոդվածը, ձեռագրի ներկայիս գտնվելու վայր է համարում Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի Հանրապետական ձեռագրական ֆոնդը. **“Today, this manuscript is housed at the Republican Manuscript Fund (Academy of Sciences) of Baku (MS 8315).”** (Hakobyan et al., 2022, 130–131; Մինասյան, 2020, 178–179; Մինասյան, 2015, 72–73): Այնուհետև հիշատակելով Մակար Բարխուդարյանցի նկարագրությունը՝ նշում է, որ ձեռագրի Բաքու տեղափոխելու պատմությունն անհայտ է:

Ավետարանի Բաքու հասնելու պատմության մանրամասներն ի հայտ են գալիս մի գրական ակնարկում: Բաֆֆու հետքերով գնացած արձակագիր **Բակուր Կարապետյանը** Բաֆֆու 150–ամյակին ձոնված

«Հարյուր տարվա երկխոսություն» վերնագրով գրքում ներկայացնում է գետաշենցի 84-ամյա Սուրեն Տեր-Իսրայելյանի հետ զրույցը: Այս շրջանակներում հեղինակը փորձել է տեղեկություն ստանալ Բաֆֆու՝ ուղեգրության մեջ հիշատակած Ավետարանից: Տեր-Իսրայելյանը շփոթեցնող տեղեկություններ հայտնելու հետ մեկտեղ՝ պատմում է ձեռագրի պատմությունը. **«1927–1928 թվերին Ավետարանը արծաթյա աջի ու այլ մասունքների հետ գյուղի կոլտնտեսության ղեկավարությունը տանում է Բաքու ու հանձնում թանգարանին, որի դիմաց գյուղի համար ռադիոընդունիչ ու այլ սարքավորումներ է ստանում: Մի քանի տարի հետո գյուղխորհրդի նախագահ Աբգարը դրանք Բաքվի հայկական եկեղեցում է տեսնում: Դրանից հետո ոչ մի տեղեկություն չենք ունեցել մեր ավետարանի մասին»** (Կարապետյան, 1990, 20–21): Բակուր Կարապետյանը, ծանոթագրելով զրույցից մեջբերված խոսքը, սխալաբար տեղեկություն է հայտնում առ այն, որ ձեռագիրը «Հաղթատի ավետարան» անվան տակ պահվում է Մատենադարանում:

Ինչպես հայտնի է, Խորհրդային Միության կարևորագույն ծրագրերից մեկն է եղել հանրային կյանքի աշխարհիկացումն ու կրոնազերծումը: Սոցիալիստական հասարակարգի կառուցման ու արժեհամակարգի արմատական փոփոխության ճանապարհին եկեղեցական արժեքների ու թանկարժեք իրերի բռնագրավումը, պետականացումը կամ առանձին անհատների կողմից պետությանը կամ թանգարաններին հանձնումը ու դրանց դիմաց կենցաղային իրեր ստանալը համընդհանուր բնույթ է կրել: Այդպիսով, Սովետական Ադրբեջանի կազմի մեջ մտած Շահումյանի շրջանի Գետաշեն գյուղի ղեկավարության կողմից եկեղեցապատկան իրերը մայրաքաղաքի թանգարան հանձնելը ժամանակի բնորոշ պատմություններից մեկն էր: Նկատի պետք է առնել նաև այն փաստը, որ այդ շրջանում է Բաքվի Պատմության թանգարանում սկսել ձևավորվել ադրբեջանական ձեռագրական հավաքածուն: Գյուղի հավաքական հիշողության մեջ կարծրացած և զառամյալ ծերունու միջոցով փոխանցված այս պատմության մեջ արժանահավատ չի թվում միայն մասունքների՝ այդ թվում նաև Ավետարանի Բաքվի հայկական եկեղեցում հայտնվելը: Եկեղեցու՝ տվյալ դեպքում Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ տարվող քաղաքականության պարագայում անհավանական է թվում պետական ինստիտուտից (թանգարանից) այդ շրջանում մերժված եկեղեցուն ձեռագրի հանձնումը և կրկին դրա վերադարձը պետական ինստիտուտ: ԱՌԶՖ-ին պատկանած այս ձեռա-

գիրը (թիվ 8315), ըստ երևույթին, փոխանցվել է Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտին և այժմ գտնվում է այնտեղ:

Բաքվի հավաքածուների քննությունից հնարավոր է նաև մոտավոր ուրվագծել վավերագիր 211-ում նկարագրված մի քանի ձեռագրերի անցած ճանապարհը: 1813 թ. Բաքվում գրչագրված «**Մեկնություն արարածոց**» ձեռագիրը, 1870–1891 թթ. ընթացքում մուտք գործելով **Բաքվի Մարդասիրական ընկերության գրադարան**, ցուցակագրվել է 1891 թ. լույս տեսած գրադարանի առաջին իսկ գրացուցակում: 1912 թ. ձեռագիրը հաշվառվել է նույն գրադարանի գրացուցակում: Լևոն Խաչիկյանը ձեռագիրը նկարագրել է նույն տեղում՝ սովետական շրջանում Լենինի անվան Բաքվի կենտրոնական գրադարանի հայկական բաժնում: Ըստ ամենայնի՝ ձեռագիրը նախ տեղափոխվել է Պատմության թանգարան, այնտեղից՝ ԱՌՀՖ և ապա՝ Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտ:

Խաչիկյանի Տետրակի ձեռագրերից N 2՝ «Գիրք արեգական և լուսնի»-ը գրչագրվել է Շաքիի թեմին պատկանող նշանավոր **Ճալեթի վանքում** 1801 թ. Աբրահամ վարդապետի կողմից: Ամենայն հավանականությամբ, այս Աբրահամ վարդապետը նույն շրջանում գործունեություն ծավալած **Աբրահամ Շաբեցին** է. նրանից հայտնի վերջին և ամենաարժեքավոր գործը՝ «Գրագրությունների գիրք»-ը գրչագրել է նույն Ճալեթ գյուղում 1791 թ. (ՄՄ 3592) (Անասյան, 1959, 139–142, հմմտ. Ստեփանյան, 2021, 92–144) : Ըստ էության, «Գիրք արեգական և լուսնի» խորագրով ձեռագիրը մնացել է նույն տարածաշրջանում և այնուհետև մուտք է գործել Բաքվի հավաքածուներ կամ նախասովետական շրջանում (Մարդասիրական ընկերության գրադարան) կամ հավաքագրվել է սովետական շրջանում:

Հավանական է, որ երկու հմայիլները նույնպես հավաքագրվել են սովետական շրջանում՝ առանձին անհատներից, քանի որ պաշտպանիչ նշանակություն ունեցող, ժողովրդական պաշտամունքի առարկա այդօրինակ ձեռագրերը հիմնականում պահվել են անհատների մոտ՝ որպես ընտանեկան սրբություն: Հավաքագրման ճանապարհով Բաքու է տեղափոխվել նաև «Գյուլիստանի Ծեր ավետարան»-ի արծաթյա կազմը:

Վազգեն Հակոբյանի ուսումնասիրած Բաղեշում գրչագրված Ժողովածուն նույնպես պատկանել է Մարդասիրական ընկերության գրադարանին: Հավանական է, որ 1870–1891 թթ. ընթացքում մուտք գործելով Բաքվի Մարդասիրական ընկերության գրադարան, ցուցակագրվել

է 1891 թ. լույս տեսած գրադարանի առաջին իսկ գրացուցակում: Վազ-գեն Հակոբյանը ձեռագիրը նկարագրել է սովետական շրջանում՝ Լենինի անվան Բաքվի կենտրոնական գրադարանի հայկական բաժնում:

7. Բաքվի հայերեն ձեռագրերի վերաբերյալ մերօրյա հիշատակությունները

Բաքվում պահվող հայերեն ձեռագրերի մերօրյա հիշատակումները ընդհանրական են ու անորոշ: Տարբեր հաստատություններում հայերեն ձեռագրեր պահվելու և Ադրբեջանի տարածքի հայաբնակ վայրերից դրանց հավաքվելու մասին հիշատակում է Մատենադարանի գլխավոր ավանդապահ **Գէորգ Տէր-Վարդանյանը** (պաշտոնավարել է 1978–2023 թթ.) «**Եղեռնը և մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները**» աշխատասիրության առաջաբանում (Գօլանձեան և ուրիշներ, 2015, 26–27): Բաքվի՝ Նիզամիի թանգարանի հայերեն ձեռագրական հավաքածուի մասին վերջին տեղեկություններից մեկը գտում ենք Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր **Բեռնար Կուլիի**՝ 2020 թ. հրապարակած “**Armenian Manuscripts. Catalogues, Collections and Libraries**” մատենագիտական կարևոր աշխատության երկրորդ վերախմբագրության մեջ: Բաքվի՝ Նիզամիի թանգարանի հայերեն ձեռագրական հավաքածուին հեղինակն անդրադառնում է գրքի «Տեղագրական ցուցակ» (էջ 31–405) խորագրով հիմնական մատենագիտական բաժնում, որում այբբենական կարգով ներկայացված են ձեռագրական հավաքածուներն ու ցուցակները՝ ըստ նրանց պահպանման վայրերի (Coulie, 2020, 59) : Կուլին նշում է, որ **Նիզամիի թանգարանում կան որոշ հայերեն ձեռագրեր** [some Arm. mss] և որպես ծանոթագրություն հայտնում է, որ այդ տեղեկությունը ստացել է հայր Շառլ Ռընուից 1989 թ. օգոստոսին. “Communication of R.F. Ch. Renoux to the Author Augustus 1989” (Coulie, 2020, 59) : Անհատական հարցումները ցույց են տալիս, որ Ռընուն իր հերթին տեղեկությունը ստացել է Գէորգ Տէր-Վարդանյանից²⁰:

Ինչպես նշել ենք վերևում, Բուշաուզեն ամուսինները և Էմմա Կորխմազյանը, ինչպես նաև **Թամարա Մինասյանը**, անդրադառնալով

²⁰ Փորձելով հավելյալ մանրամասներ ձգգրտել՝ նամակագրական կապ հաստատեցինք հայագետներ Շառլ Ռընուի և Բեռնար Կուլիի հետ: Հայր Ռընուն պատմեց, որ այդ տեղեկությունը ստացել է պրն Յուրա Վարդանյանից (նկատի ունի Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գէորգ Տէր-Վարդանյանին), իսկ պրոֆեսոր Կուլին հաղորդեց, որ իր իմացած տեղեկությունը սահմանափակվում է Ռընուի հայտնածով:

Գետաշենում պահված Նիկողայոս Մելանավորի գրչագրած Ավետարանին, ձեռագրի այժմյան պահվելու վայր է համարում ԱՌՁՖ-ն: Բաքվի հայերեն ձեռագրական հավաքածուների վերաբերյալ հետագա հիշատակումները 1970-ականներից այս կողմ չեն անցնում, և նոր հրատարակություններում վերարտադրվում են այդ շրջանի տեղեկությունները: Եղած տվյալներն էլ անորոշ են կամ աղճատված: Մասնավորապես, ուսումնասիրողներին հայտնի չէ, որ ԱՌՁՖ-ի ձեռագրերը տեղափոխվել են Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտ: Ըստ ամենայնի, անցյալ դարի 70-ականներից հետո նոր հայերեն ձեռագրեր են մուտք գործել Բաքվի պետական հաստատությունների հավաքածուներ, ինչպես նաև ձեռագրերի ինստիտուտի բացմամբ՝ վերանայվել, վերամիավորվել ու վերագտնվել են Բաքվի տարբեր հաստատություններում ցրված հայերեն ձեռագրերը: Այսպես օրինակ՝ 1993 թ. ցուցակագրած «Աղոթագիրք ու հիշատակարաններ» վերնագրով գիրքը կամ ձեռագիրը նախկինում ոչ մի տեղ վկայված չէ կամ որևէ հիշատակություն հայտնի չէ «Գյուլիստանի Ծեր Ավետարանի» կազմի պահվելու վայրի մասին:

Եզրակացություններ

Այսպիսով, այս հետազոտության արդյունքում, անտիպ և տպագիր գրականության մեջ հիշատակություններ ենք գտել Սովետական Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի պետական հավաքածուներում պահվող 12 հայերեն ձեռագրերի և մեկ արծաթյա կազմի վերաբերյալ: Դրանցից հասանելի են միայն երեքը՝ մանրաժապավենի տարբերակով: Ձեռագրերը կա՛մ պահվել, կա՛մ գրչագրվել են Սովետական Ադրբեջանի կազմի մեջ մտած հայաբնակ վայրերում: Դրանցից հինգը նախասովետական շրջանից գտնվել են Բաքվում, իսկ մնացածը մուտք են գործել սովետական շրջանում՝ անհատներից կամ հնարավոր է նաև այլ պետական հաստատություններից, եկեղեցիներից ու վանքերից հավաքագրման ճանապարհով: Այս մասին է վկայում Լևոն Խաչիկյանի այն հիշատակումը, որ ձեռագրերը հավաքագրվել են Նախիջևեկանից, Շամախիից, Կիրովաբադից: Մյուս կողմից այդ մասին են փաստում նաև Olim ԱՌՁՖ 8315 Ավետարանի և «Գյուլիստանի Ծեր Ավետարանի» պատմությունները: Մինչև ԱՌՁՖ-ի կազմավորվելը՝ հայերեն ձեռագրեր են պահվել Բաքվի Լենինի անվան կենտրոնական գրադարանում, Նիզամիի անվան պետական պատմական թանգարանում, Գի-

տությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում: Անհայտ է մնում Մարդասիրական ընկերության գրացուցակներում հիշատակված մյուս չորս ձեռագրերի ճակատագիրը, ինչպես նաև Պետական պատմական թանգարանում պահված հայերեն ձեռագրերի քանակը: Տեղեկությունների կտրտվածության և անհասնալիության պայմաններում, այնուամենայնիվ, հասնելի արխիվային ու տպագիր նյութերի և մանրաժպավենների հիման վրա հրատարակության ենք պատրաստում Բաքվի հայերեն ձեռագրերի ցուցակը:

Անուշ Յ. Սարգսյան – պատմաբան, գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան աղյուակներ, սուրբգրային ժամանակագրություններ, ձեռագրական հավաքածուների պատմություն և Ամիդի գրչության կենտրոն: Հեղինակ է յոթ գիտական հոդվածի:

Գրականության ցանկ

1. Աղբրեջանական Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մ. Ֆիզուլու անվան ձեռագրերի ինստիտուտի կայքէջ՝ <https://www.manuscript.az/en/index.php?do=static&page=history-մուտք>՝ 17.05.2025):
2. **Անասյան, Հ. (1959).** *Հայկական մատենագիտություն*, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
3. **Անթարյան, Փ. (1973).** Տեղեկատու, «*Բանբեր Մատենադարանի*», №11:
4. **Բարթիկյան, Հ. (1977).** Արատոս Սոլացու և Պողոս Աղեքսանդրացու աստղաբաշխական երկերի հին հայերեն թարգմանությունները», «*Բանբեր Մատենադարանի*», №12:
5. **Բարխուդարեանց, Մ. (1895).** *Արցախ*, Բագու, «Արօր» տպ.:
6. **Գալստյան, Ա. (1958).** Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., կազմեց՝ Վ. Հակոբյան, «*Պատմաբանասիրական հանդես*», № 1:
7. **Գրացուցակ (1891).** *Գրացուցակ բարձրագոյնս հասարարեալ Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան գրադարանի*, Բագու, Ս. Տէր-Յովհաննիսեանցի տպ.:
8. **Գրացուցակ (1894).** *Գրացուցակ բարձրագոյնս հասարարեալ Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան գրադարանի (Յաւելուած 1891 թ. հրադարակուած գրացուցակի)*, Բագու, «Արօր» տպ.:
9. **Գրացուցակ (1899).** *Գրացուցակբարձրագոյնս հասարարեալ Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան գրադարան N° 2 (Յաւելուած 1891–1894 թ. գրացուցակների*, Բագու, «Արօր» տպ.:

10. **Գրացուցակ (1900).** *Գրացուցակ Բազումա Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի, №3 (Յաւելում 1891–1894–1899 թ. հրատարակած գրացուցակների),* Բազում, «Արօր» տպ.:
11. **Գրացուցակ (1901).** *Գրացուցակ Բազումա Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի №4 (Յաւելում 1891–1894–1899 և 1900 թ. հրատարակած գրացուցակների),* Բազում, «Արօր» տպ.:
12. **Գրացուցակ (1912).** *Գրացուցակ հայերէն գրքերի Բազումա Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի=Каталогъ армянскихъ книгъ библиотеки Бакинск. Арм. Человеколюбиваго общества Баку, Электротпечатня газ. «Баку», 1912:*
13. **Գօլանձեան, Ս. և ուրիշներ (2015).** *Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները,* Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» հրատ.:
14. **Եգանյան, Օ և ուրիշներ (1965).** *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի,* հ. Ա, կազմ. Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան և ուրիշներ, խմբ. Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
15. **Եգանյան, Օ. և ուրիշներ (1970).** *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի,* հ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան և ուրիշներ, խմբ. Լ.Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երևան, ՀԳԱ հրատ.:
16. **Եգանյան, Օ. (1971).** Գետաշենի ավագ Ս. Նշան մատրան հայերեն ձեռագրերը; Մուղնու ս. Գևորգ վանքի հայերեն ձեռագրերը; Կարապետ արքեպս. Բագրատունու հայերեն ձեռագրերի հավաքածուն, «*Էջմիածին*», հ. Թ:
17. **Լալայեան, Ե. (1899).** Գանձակ գաւառ, «*Ազգագրական հանդէս*», Ե գիրք, Թիֆլիս, Կ. Մարտիրոսեանցի տպ:
18. **Խաչատրյան, Հ. (1975),** *Գրական տեղեկատու. Հայաստանի Սովետական գրողների միության անդամներ 1934–1974,* Երևան, «Հայաստան» հրատ:
19. **Խաչիկյան, Լ. (1955).** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ,* մասն առաջին (1401–1450 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
20. **Խաչիկյան, Լ. (1958).** «Մատենադարանը անցյալում և Սովետական իշխանության տարիներին», «Բանբեր Մատենադարանի», №4:
21. **Կարապետյան, Բ.(1990).** *Հայրուր տարվա երկխոսություն,* Երևան, «Հայաստան» հրատ.:
22. **Կարապետյան, Գ. (1983).** Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց (Ծննդյան 150–ամյակի առթիվ), «*Էջմիածին*», հ. Է:
23. **Կարապետյան, Ս.(2004).** *Հյուսիսային Արցախ,* ՀՀՈՒ Գիտական ուսումնասիրություններ, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ.:
24. **Կարապետյան Ս. (2019).** *Մոսկվանք,* «Հայաստանի պատմություն» մատենաշար, Հ. Դ, Երևան, ՀՀՈւ հիմն.:
25. **Կորնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի ֆոտոարխիվ. պայմ. N 1. (Օlim ԼՍՍՌ ԳԱ ԱՌՁՖ 5106),**

- պայմ. N 2 (1790/d.1134), պայմ. N 3 (Olim Бакинское Центральная библиотека имени В.И. Ленина, Арм. №1). պայմ.թիվ 4 (Olim ԱՍՍՌ ԳԱ):
26. **Հակոբյան, Վ. (1956).** *Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ., Հ. II*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
 27. **Ղահրամանյան, Կ. (2002).** *Օջախի գիրք. նշխարներ*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
 28. **Մաթևոսյան, Ա. (1997).** *Մեծփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)*, Էջմիածին, «Մայր աթոռ Սուրբ Էջմիածին» հրատ.:
 29. **Մաղալյան, Ա. (2007).** *Արցախի մեղիքությունները և մեղիքական փոխերը*, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
 30. **Մելիքսեթ–Բեկ, Լ. (1958).** Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, «Բանբեր Մալթենադարանի», №4, :
 31. **Մինասյան, Թ. (2015).** *Արցախի գրչության կենտրոնները*, Երևան, «Նաիրի» հրատ.:
 32. **Մինասյան, Թ. (2020).** *Ուրիքի գրչության կենտրոնները*, Երևան, «Մատենադարան» հրատ.:
 33. **Միրզաբեգանց, Յ.(1872).** Նամակ Բագուից, «Մշակ», №13:
 34. **Միրզոյան, Է. (2013).** Բաքվի հայ բարեգործական ընկերության պատմությունից, «Էջմիածին», № Բ:
 35. **Միրբալե Զամեանց (1786).** *Պապոմոթիւն Հայոց*, Հ. Գ, Վենետիկ, Յովհաննու Փիացեանց տպ.:
 36. **ՄՄ, ձեռագիր N 11308:**
 37. **ՄՄ, «Դրսի մանրաժապավենների ֆոնդ», N 51 (Olim ԱՍՍՌ ԳԱ ՌՁՖ 8315), N 662 (Olim ՍՍՌ ԳԱ ՌՁՖ 5030 (№3):**
 38. **ՄՄ, «Լևոն Խաչիկյանի անվան արխիվային ֆոնդ», վավ. 211. 299, 300, 313, 299, 300, 785:**
 39. **ՄՄ, «Մատենադարանի հիմնարկի արխիվային ֆոնդ», թղթ. 82, վավ. 41, 42, թղթ. 84/11, վավ. 14:**
 40. **Յովսէփեանց, Գ.(1934).** Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց (Գետաշէնի Ավետարանը), «Միոն», հ. Ը/4:
 41. **Նազարյան, Շ. (1994).** Յովսէփ վարդապետ Արցախեցի (ԺԸ–ԺԹ դար), «Բազմավէպ», հ. ԶԾԲ:
 42. **Ստեփանյան, Գ. (2021).** Ճալեթի վանքը պատմության քառուղիներում, «Բանբեր Մալթենադարանի», № 32:
 43. **Վարդանյան, Գ. (2001).** Գրադարանային գործը Հայաստանի առաջին հանրապետությունում, *Հայոց պատմության հարցեր.գիտական հոդվածների ժողովածու*, 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
 44. *Տեղեկագիր եւ հաշիւ ((1917). Տեղեկագիր եւ հաշիւ 1916 թ. գործունեության Հայոց Մարդասիրական ընկերության յանուն Ս. Գրիգոր Լուսաուրչի, Բագու, «Տրուդ» Ս. Գ. Բէլրադիի տպ.:*
 45. **Բաֆֆի (1896).** Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում», «Լումա», Ա և Բ գրքեր:

46. **Բաֆֆի (1897).** *Խամսայի մեկիբություններ*, Երկերի ժողովածու., Հ. 9, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
47. **Փափազյան, Հ. (1965).** Ձեռագրերի ցուցակ, I հատոր /Պատմություն, աշխարհագրություն, գրականության տեսություն, թագքիրաներ, գեղարվեստական գրականություն և գրագրություն/, Աղրբեջանական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Բաքու, 1963, 513 էջ, գինը՝ 2 ռ, «Պարմարանասիրական հանդես», № 1:
48. **Buschhausen, Hei. und Hel., Korchmasjan, E. (2009).** *Armenische Buchmalerei und Baukunst der Krim*, Erevan, “Nairi pub.”.
49. **Chkhikvadze, N., et al. (2018).** *The Georgian Manuscript Book Abroad*, compiled, Tbilisi, Korneli Kekelidze Georgian National Center of Manuscripts.
50. **Coulie, B. (2020).** *Armenian Manuscripts. Catalogues, Collections, Libraries, 2nd Revised Edition*, Corpus Christianorum, Turnhout, “Brepols” pub..
51. **Gahramanov, J. (1993).**..منتخب من مقتنيات معهد المخطوطات في باكو بأذربيجان / إعداد عبد الرحمن فرفور, مجد مطيع الحافظ إشراف جهانگیر Elite (Elite Possessions of Manuscripts Institute of Baku – Azerbaijan, prepared by Abdul Rahman Farfour and Muhammad Muti Al-Hafiz, The United Arab Emirates: Dubai.
52. **Hakobyan, H. et al. (2022).** *Manuscript Heritage of Artsakh and Utik*, Yerevan, «Antares» pub..
53. **Kekelia, V. (2019).** Two unexplored Georgian Manuscripts Stored in *Abroad in Georgian Manuscript: International Summer School and Conference: Conference Program and Abstracts*, Tbilisi.
54. **Melkonyan, A. (2024).** The literary heritage of the philosopher, theologian and philologist Hovsep' Arts'akhets'i (18th–19th centuries) in *Das kulturelle Erbe von Arzach/Արցախի մշակութային ժառանգությունը*, eds. A. Müller, H. G. Harutyunyan et al., Universitätsverlag Kiel:
55. **Геворкян, А. (1970).** Армянский миниатюрист XVII века Никогос Цахкарап, «Вестник общественных наук», по. 3.
56. **Каталог (1909).** *Каталог библиотеки Бакинского общественного собрания*, Баку.
57. **Корхмазян, Э. (1978).** Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Ереван, изд–во АН Арм. ССР.
58. **Первое добавление къ каталогу библиотеки Бакинского Общественного Собрания за 1910–1913 гг. (1913).** Баку, Электронпечатня газеты «Баку».

Bibliography (Latin Script)

1. Adrbeĵanakan Gitowt'yownneri Azgayin Akademiayi M. Fizowlow anvan jeĵagreri institowti kayk'ëĵ, <https://www.manuscript.az/en/index.php?do=static&page=history-17.05.2025>) (In English and Azerbaijani).
2. **Anasyan, H. (1959).** *Haykakan matenagitowt'yown*, h. A, Erewan, HSSR GA hrat., (In Armenian).
3. **Ant'abyan, P'. (1973).** Teĵekatow, «*Banber Matenadarani*», №11 (In Armenian).
4. **Bart'ikyan, H. (1977).** Aratos Solac'ow ew Poĵos Aĵek'sandrac'ow astĵabašxakan erkeri hin hayeren t'argmanowt'yownnerë, «*Banber Matenadarani*», №12 (In Armenian)

5. **Barxowdareanc', M. (1895).** *Arc'ax*, Bagow, «Aròr» tp., (In Armenian).
6. **Buschhausen, Hei. und Hel., Korchmasjan, E. (2009).** *Armenische Buchmalerei und Baukunst der Krim*, Erevan, Nairi pub. (In German and Russian).
7. **Eganyan, Ծ. ew owrišner (1970).** *C'owc'ak ježagrac' Maštoc'i anvan Matenadarani*, h. B, kazmec'in Ծ. Eganyan, A. Zeyt'ownyan ew owrišner, xmb. L.Xačikyan, A. Mnac'akanyan, Erewan, HGA hrat., (In Armenian).
8. **Eganyan, Ծ. ew owrišner (1965).** *C'owc'ak ježagrac' Maštoc'i anvan Matenadarani*, h. A, kazm. Ծ. Eganyan, A. Zeyt'ownyan ew owrišner, xmb. L. Xačikyan, A. Mnac'akanyan, Erewan, HSSR GA hrat., (In Armenian).
9. **Eganyan, Ծ. (1971).** Getašeni avag S. Nšan matran hayeren ježagrērē; Mowğnow s. Geworg vank'i hayeren ježagrērē; Karapet ark'eps. Bagratownow hayeren ježagreri havak'açown, «Ējmiacin», h. T' (In Armenian).
10. **Galstyan, A. (1958).** *Manr žamanakagrowt'yownner XIII–XVIII dd.*, kazmec' V. Hakoby, «Patmabanasirakan handes», № 1 (In Armenian).
11. **Gevorkân, A. (1970).** Armânskij miniatûrist XVII veka Nikogos Cahkarar, «Vestnik obšestvennyh nauk», no. 3 (In Russian)
12. **Gòlančean, S. ew owrišner (2015).** *Eğenē ew mer ježagreri korowstern ow p'rkowt'yownnerē*, Ējmiacin, «Mayr At'ož Sowrb Ējmiacin» hrat., (In Armenian).
13. **Grac'owc'ak (1894).** *Grac'owc'ak barjragoyns hastateal Bagoway Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradarani* (Yawelowaç 1891 t'. hratarakowaç grac'owc'aki), Bagow, «Aròr» tp., (In Armenian).
14. **Grac'owc'ak (1899).** *Grac'owc'ak barjragoyns hastateal Bagoway Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradaran* № 2 (Yawelowaç 1891–1894 t'. grac'owc'akneri), Bagow, «Aròr» tp., (In Armenian).
15. **Grac'owc'ak (1900).** *Grac'owc'ak Bagowa Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradarani*, №3 (Yawelowaç 1891–1894–1899 t'. hratarakaç grac'owc'akneri), Bagow, «Aròr» tp., (In Armenian).
16. **Grac'owc'ak (1901).** *Grac'owc'ak Bagowa Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradaran* №4 (Yawelowaç 1891–1894–1899 ew 1900 t'. hratarakaç grac'owc'akneri), Bagow, «Aròr» tp., (In Armenian).
17. **Grac'owc'ak (1912).** *Grac'owc'ak hayerēn grk'eri Bagowa Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradarani*=Каталог армянских книг библиотеки Бакинск. Арм. Человеколюбиваго общества Баку, Электронпечатня газ. «Баку» (In Armenian).
18. **Grac'owc'ak (1891).** *Grac'owc'ak barjragoyns hastateal Bagoway Hayoc' mardasirakan ėnkerowt'ean gradarani*, Bagow, S. Tēr–Yovhanniseanc'i tp. (In Armenian)
19. **Hakoby, V. (1956).** *Manr žamanakagrowt'yownner. XIII–XVIII dd.*, H. II, Erewan, HSSR GA hrat., (In Armenian).
20. **Karapetyan, B. (1990).** *Haryowr tarva erkxosowt'yown*, Erewan, «Hayastan» hrat., (In Armenian).
21. **Karapetyan, G. (1983).** Makar episkopos Barxowdaryanc' (Çnndyan 150–amyaki ašt'iv), «Ējmiacin», h. Ē. (In Armenian).
22. **Karapetyan, S. (2004).** *Hyowsisayin Arc'ax*, HÇOw Gitakan owsowmnasirowt'yownner, h. 6, Erewan, HH GA «Gitowt'yown» hrat., (In Armenian).
23. **Karapetyan, S. (2019).** *M'avank'*, «Hayastani patmowt'yown» matenašar, H. D, Erewan, HÇOw himn., (In Armenian).

24. **Katalog biblioteki Bakinskago obšestvennago sobraniâ Baku (1909).** Baku (In Russian).
25. **Korhmazân, Ė. (1978).** *Armânskaâ miniatūra Kryma (XIV–XVII vv.)*, Erevan, nzd–vo AN Arm. SSR (In Russian).
26. **Koźneli Kekelijeï anvan Vrastani ježagreri azgayin kentroni fotoarxiv, paym. t'. 1. (Olim ASSR GA ARJF 5106), paym. t'. 2 (1790/d.1134), paym. t'. 3 (Olim Bakinskoe Centralnaja biblioteka imeni V. I. Lenina, Arm. №1). paym.t'. 4 (Olim ASSR GA) (In Armenian and Georgian).**
27. **Lalayan, E. (1899).** Ganjak gawař, «*Azagrakan handēs*», E girk', T'iflis, K. Martiroseanc'i tp., (In Armenian).
28. **Mağalyan, A. (2007).** *Arc'axi melik'owt'yownnerē ew melik'akan tnerē*, Erewan, GAA «Gitowt'yown» hrat., (In Armenian).
29. **Mat'ewosyan, A. (1997).** *Meçop'avank'i grčowt'yan kentronē (ŽB–ŽE dd)*, Ėjmiacin, «Mayr at'oř Sowrb Ėjmiacin» hrat., (In Armenian).
30. **Melik'set'–Bek, L. (1958).** C'owc'ak hayeren ježagrac' Vrastani kentronakan patmakan arxivi, «*Banber Matenadaranî*», №4 (In Armenian).
31. **Mik'ayel Čamčeanç' (1786).** *Patmowt'iwn Hayoc'*, H. G. Venetik, Yovhannow P'iac'eanc' tp., (In Armenian).
32. **Minasyan T'. ,** Owtik'i grčowt'yan kentronnerē, Erewan, «Matenadaran» hrat., 2020. (In Armenian).
33. **Minasyan, T'. (2015),** *Arc'axi grčowt'yan kentronnerē*, Erewan, «Nairi» hrat., (In Armenian).
34. **Mirzabēgnanc', Y. (1872).** Namak Bagowic', «*Mšak*», №13 (In Armenian).
35. **Mirzoyan, Ė. (2013)**ю Bak'vi hay baregorčakan ėnkerowt'yan patmowt'yownic', «*Ėjmiacin*», № B (In Armenian).
36. **MM, «Drsi manražapavengeri fond», t'.51 (Olim ASSR GA RJF 8315), t'.662 (Olim SSR GA RJF 5030 (№3) (In Armenian).**
37. **MM, «Lewon Xaçikyani anvan arxivayin fond», vav. 211. 299, 300, 313, 299, 300, 785 (In Armenian and Russian).**
38. **MM, «Matenadaran himnarki arxivayin fond», t'ğt'. 82, vav. 41, 42, t'ğt'. 84/11, vav. 14 (In Armenian).**
39. **MM, ježagir t'iv 11308 (In Armenian).**
40. **Nazaryan, Š. (1994).** Yovsēp' vardapet Arc'axec'i (ŽĖ–ŽT' dar), «*Bazmavēp*», h. ČÇB, (In Armenian).
41. **P'ap'azyan, H. (1965).** Ježagreri c'owc'ak, I hator /Patmowt'yown, ašxarhagrowt'yown, grakanowt'yan tesowt'yown, t'azk'iraner, geğarvestakan grakanowt'yown ew gragrowt'yown/, Adrbežanakan SSR GA hratarakčowt'yown, Bak'ow, 1963, 513 ėj, ginē` 2 ė, «*Patmabanasirakan handes*», № 1 (In Armenian).
42. **Pervoe dobavlenie k" katalogu biblioteki Bakinskago Obšestvennago Sobraniâ za 1910–1913 gg. (1913).** Baku, Ėlektropečatnâ gazety «Baku» (In Russian).
43. **Raffi (1896),** Erkow amis Ağvanic' ew Syownyac' ašxarhnerowm, «*Lowmā*», A ew B grk'er (In Armenian).
44. **Raffi (1987).** *Xamsqayi melik'owt'yownner, Erkeri žoğovaçow.*, H. 9, Erewan, «Sovetakan groğ» hrat. (In Armenian).
45. **Step'anyan, G. (2021).** Čalet'i vank'ē patmowt'yan k'ažowğinerowm, «*Banber Matenadaranî*», № 32 (In Armenian).

46. **Teğekagir ew hašiw ((1917).** *Teğekagir ew hašiw 1916 t'. gorçownēowt'ean Hayoc' Mardasirakan ėnkerowt'ean yanown S. Grigor Lowsaworči, Bagow, «Trowd» S. G. Bēlradir tp., (In Armenian).*
47. **Vardanyan, G. (2001).** Gradaranayin gorçē Hayastani aṛaṣin hanrapetowt'yownowm, *Hayoc' patmowt'yan harc'er.gitakan hodvačneri žoğovačow*, 2, Erewan, HH GAA «Gitowt'yown» hrat., (In Armenian).
48. **Xačatryan, H. (1975).** *Grakan teğekatow. Hayastani Sovetakan groğneri miowt'yan andamner 1934–1974*, Erewan, «Hayastan» hrat., (In Armenian).
49. **Xačikyan, L. (1958).** Matenadaranē anc'yalowm ew Sovetakan iṣxanowt'yan tarinerin, «*Banber Matenadaran*», №4 (In Armenian).
50. **Xačikyan, L. (1955).** *ŽE dari hayeren jeṛagreri hiṣatakaranner, masn aṛaṣin (1401–1450 t't')*, Erewan, HSSH GA hrat., (In Armenian).
51. **Yovsēp'eanc', G. (1934).** Hağbati dproc'i mi glowx gorçoc' (Getašēni Avetaranē), «*Sion*», h. Ė/4 (In Armenian).